



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1425

83

म-५७

С. С. С.

КОДА КНИГА ВЗЯТА

БЕРЕГИТЕ КНИГУ!
ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.
Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

С. С. С.

2011

30/11/11	
3974	
11/11	
3984	
26/11	
26.08.	
18/11	
2826	
1/11/11	
3555	

4

13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

2

83 82
2-47

Հ Ե Ր Ս Ր Մ

1373
2136
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ


պր. Փ Ա Բ Ի Օ Ղ Ա

5 . r k

169

169

ժ - 12



8861

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Յ

Խ Ա Չ Ա Տ Ո Ւ Ր Բ Ա Հ . Փ Ա Ն Ե Ա Ն Յ

2136

Центральная библиотека имени
гос. Луи

ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
(Արձանագրության համաձայն լրագրից)

№



2003

Թ Ի Փ Լ Ի Ս

Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի

Միքայելեան փողոց № 81

1901

1399

Փ Մ Բ Ի Օ Լ Ս

8861

302 թուականին Քրիստոսի ծննդից յետո՛ ղեռ քիչ մարդիկ գիտէին և գործով կատարում Քրիստոսի վարդապետութիւնը: Այն օրերը Քրիստոնեաների համար շատ ծանր ժամանակներ էին: Հեթանոսները պահանջում էին, որ քրիստոնեաներն էլ ապրին այնպէս, ինչպէս իրենք էին ապրում, և պաշտէին այն ասէնը, ինչ որ իրենք էին պաշտում: Քրիստոնեաներն այդ բանին չէին համաձայնում, ասելով՝ որ իրենք կարող են կատարել միայն այն, ինչ որ հակառակ չէ Աստծուն, իսկ պաշտել նրանք կարող են միայն այն Աստծուն, որը բարութեան և ճշմարտութեան աղբիւրն է: Հեթանոսներն էլ հալածում էին քրիստոնեաներին, և՛ տանջում, և՛ սպանոտում էին նրանց:

Ահա այդ ժամանակ հռովմում իւր տանը մի հռովմայեցի հատակաւոր կին էր նստած, որի անունը Լիւցինիա էր: Նա հագած ունէր հասարակ հագուստ, թէև հարուստ ընտանիքի զաւակ էր: Նրա դէմքը խաղաղ էր, մտախոհ և մինչև անգամ խիստ: Այդ կինն իւր կեանքի մէջ շատ նեղութիւններ է կրել, բայց և կարո-

Дозволено Ценз. Тифлисъ 7 Июля 1901 года.



2027 9/ 41

դացել էր հաշտուել իւր վշտի հետ և չընկճուիլ հողով: Նա գործի էր նստած և ուսումնարանից իւր որդու դալուն էր սպասում: Պանկրատիոսը նրա միակ որդին էր և փոքր մանուկ էր, երբ հայրը վախճանուեցաւ: Հատ նեղութիւններ, վրդովմունք և անբուն գիշերներ է անցկացրել մայրը որդու համար: Ամբողջ հողով նա աշխատում էր որդուն քրիստոնեայ մեծացնել և թէ խօսքերով և թէ իւր կեանքի օրինակով աշխատում էր ցոյց տալ, որ կեանքը երջանիկ է միայն այն ժամանակ, երբ մենք ապրում ենք այնպէս, ինչպէս ուսուցել է մեզ Քրիստոս: Լիւցինիան որդուն տուել էր դպրոց միայն այն պատճառով, որ այդ դպրոցի մասին լաւ էին խօսում և որ, նրա կարծիքով, ուսուցիչը պէտք է որ քրիստոնեայ լինէր: Այդ ժամանակ զարհուրելի բռնութիւններ էին քրիստոնեաների համար: Նրանց համար ամեն տեղ լքրտեսներ ու թշնամիներ կային: Եթէ յայտնուէր, որ վարժապետը քրիստոնեայ էր, նրա դպրոցն իսկոյն կըփակէին և իրան էլ կապանէին:

Այժմ Լիւցինիայի որդին մեծացած է: Լիւցինիան տեսնում է, որ իւր յոյսերն իրականանում են: Պանկրատիոսն արդէն քրիստոնեայ էր ոչ միայն խօսքով, այլ և գործով: Նա արդէն աւարտել էր ուսումը և այդ օրը վերջին անգամ զնայ դպրոց: Նա երկար ժամանակ չը

վերադարձաւ դպրոցից և Լիւցինիան սկսեց անհանգստանալ և միշտ յաճախակի նայում էր դռանը: Յանկարծ նա լսեց որդու ծանօթ քայլերը, ուրախացաւ և թողնելով գործը՝ գլուխը վեր բարձրացրեց: Սենեակ մտաւ 18 տարեկան մի բարձրահասակ և գեղեցիկ պատանի: Նա համբուրեց մօրը և նստեց նրա մօտ: Մայրը հարցրեց.— Ինչո՞ւ ուշացար, Պանկրատիոս: Արդեօք քեզ որ և է դժբաղդութիւն հօ շի պատահել:

— Ո՛չ, մայրիկ, ոչինչ, դու անհանգիստ մի լինիր: Ահաւասիկ պատմեմ քեզ զլսիս եկածը: Այսօր վարժապետը մեզ գրաւոր պարագմունք էր տուել այն մասին, թէ մեզանից իւրաքանչիւրն ինչպէս կըցանկանար ապրել: Իմ ընկերներն ամենքն էլ կարգացին իրենց շարադրութիւնները, բայց նրանց գրուածքներն ինձ գիր չեկան, որովհետեւ նրանք շատ ստոր և անմիտ ցանկութիւններ էին արտայայտել: Սակայն ինչպէս կարող էին նրանք լաւ բան գրել, քանի որ նրանք այդ մասին չեն էլ մտածել, թէ ինչ է լաւը, ինչ է վատը: Նրանք չըգիտեն, թէ ինչի մէջ է կայանում իսկական ճշմարտութիւնը: Նրանք ամենքն էլ ապրում ու կատարում են միայն իրենց կամքը, այլ ոչ Աստուծունը: Նրանք դեռ չըգիտեն Քրիստոսի այն վարդապետութիւնը, թէ պէտք է կատարել ոչ իւր սեպհա-

կան, այլ Արարչի կամքը: Եւ այդ խեղճերը մի կողմից միւս կողմն ընկնելով՝ չըզդիտեն, թէ ինչ անեն, որ երջանկութիւն գտնեն: Ո՛րը ուտում խմում է մինչ խելացնորութեան աստիճան՝ տխրութիւնից և կարօտից ազատուելու համար, ո՛րը պճնւում է, ո՛րը գնում է նայելու, թէ ինչպէս մարդիկ զոհւում և կերակուր են դառնում գազաններին, — և ո՛չ մի բան նրանց չի օգնում: Մայրիկ, ես ցաւեցի նրանց, երբ Յիշեցի նրանց ամբողջ կեանքը: Յիշեցի և հօրս, թէ ինչպէս նա մեռաւ Աստուծոյ ճշմարտութեան համար, չերկնչելով ո՛չ տանջանքներից և ոչ մահից, և ես կամեցայ ցոյց տալ նրանց Աստուծոյ հէնց այդ արդարութիւնը. — ցոյց տալ, որ կայ մի այլ կեանք, ուր հարկ չըկայ մոռացութեան տալ իրեն և անձկութիւնից զանազան զուարճութիւնների դիմել: Գրեցի ես, թէ Աստուծոյ արդարութիւնը մեզ ցոյց է տուել Քրիստոս, թէ նա մեզ վարդապետել է և իւր կեանքի օրինակով ցոյց տուել, և թէ՛ եթէ մարդիկ կատարէին այդ վարդապետութիւնը, այն ժամանակ Աստուծոյ արքայութիւնը երկրի վրայ կըլինէր: Յետոյ գրեցի, թէ՛ որպէս զի Աստուած մեր մէջ լինի, մեզանից իւրաքանչիւրը պարտաւոր է ապրել այնպէս, ինչպէս ուսուցել է Քրիստոս, որովհետեւ նրա վարդապետութիւնը երջանկութիւն է ինչպէս մի մարդու, այնպէս

էլ բոլոր մարդկանց համար միասին առած: Թէ՛ մի անգամ հաւատալով Քրիստոսի վարդապետութեան, անկարելի է արդէն չըկատարել այն, չի կարելի ասել, թէ այդ դժուար վարդապետութիւն է: Քրիստոսի վարդապետութիւնը լոյս է և մի անգամ լոյս տեսնելով՝ անկարելի է արդէն չըզնալ դէպի նա:

— Հէնց որ սկսեցի կարդալ իմ գրուածքը, տեսնեմ մեր վարժապետը կռացաւ դէպ ինձ և ասաց. «զգուշացիր, դու քեզ մատնում ես, այստեղ կան մարդիկ, որոնց քո խօսքերը հաճելի չեն» — Մայրիկ, նա պէտք է որ քրիստոնեայ լինի: Մայրն ասաց.

— Փառք Աստուծոյ, ես շատ ուրախ եմ, որ նա իրօք քրիստոնեայ է: Քրիստոսին խաչեցին, և մեզ՝ նրա աշակերտներին էլ՝ նոյնը կանեն: Դեռ երկար կըտանջեն մարդիկ միմեանց, մինչև կըճանաչեն Աստուծուն: Եւ որպէս զի նրանք ճանաչեն նրան, մենք պէտք է մեր կեանքում անենք այն, ինչ որ Աստուծոյ արդարութիւնն է պահանջում, — այն է՛ գործել և քարոզել մարդկանց Աստուծոյ ճշմարտութիւնը չերկնչելով մահից, և եթէ հարկ լինի՝ և մեռնել, ինչպէս նա մեռաւ: Դու լաւ ես արել, որդեակս, որ չես վախեցել և գրել ես ամեն ճշմարտութիւն: Ի՞նչ ասացին քո ընկերները, երբ դու կարդալը վերջացրիր:

— Համարեա ամենքը գովեցին ինձ և զարմացան, որ ես այնքան լաւ էի գրել: Միայն մի աշակերտ էր լռել և ամբողջ ժամանակ բարկութեամբ նայում էր ինձ:

— Ինչո՞ւ:

— 2րդիտեմ, բայց նա ինձ շատ ատուճ է: Երբ մենք դուրս եկանք ուսումնարանից, նա մտեցաւ ինձ և սկսեց հայհոյել ինձ, իմ բոլոր ընկերների առաջ, նրա համար, որ ես, իբր թէ՛ իմ գրուածքով նրանց ամենքին էլ անարգել անպատուել եմ, և միայն ինձ բարձր դասել: Նա ասաց. «սպասիր, ես քեզ ցոյց կբտամ: Ես յիշում եմ քո բոլոր յիմար խօսքերը, որոնց և կբպատմեմ հօրս: Գու գիտես, որ նա դատաւոր է և քեզպէսներին չի սիրում: Գրաւ հետեանքը քեզ համար վատ կըլինի:

Լիւցինիան պատասխանեց.

— Վատ կըլինի թերիս մարմնի համար միայն, բայց ո՞չ հոգու: Մահը մեզ համար զարհուրելի չէ, որովհետև առանց որ և է սպառնալիքի էլ մենք գիտենք, որ ամեն բոլոր կարող ենք մեռնել:— Յետոյ ինչ պատահեց:

— Յետոյ նա կամեցաւ ինձ հետ կուռել, բայց ես ո՞չ մի ոխ չունենալով դէպի նրան չըկամեցայ հետը կուռել: Ես սիայն պատասխանեցի նրան խաղաղ և անվրդով. «եւ երբէք չեմ կամեցել ձեզ անպատուել և ինձ բարձր

համարել, բայց գրել եմ միայն այն, ինչ որ իմ հաւատն է, և այլ կերպ էլ չեմ կարող ո՞չ խօսել և ո՞չ մտածել: Ես կամեցայ առաջ անցնել, սր կուռին շուտով վերջ տամ, բայց նա ձեռքս բռնելով ասաց.

«Ա՛խ դու, վախկոտ, վախենում ես հետս կուռելը», և խփելով ինձ՝ ասաց.

«Ահա՞ քեզ մինը»:

Լիւցինիան անհանգստութեամբ նայելով որդուն՝ հարցրեց.

— Բայց դ՞ու ինչ արիր:

— Սկզբում, մայրիկ, հազիւ կարողացայ ինձ զսպել, այնքան բարկացած էի: Չատ էի ցանկանում յարձակուել նրա վրայ, բռնել նրա կոկորդից և մի լաւ ծեծել: Ես գիտէի, որ նրանից ուժեղ եմ և կարող էի նրա հետ իմ բանս տեսնել: Մէկ էլ ցոյց տալ ընկերներին, որ ես երկշտ չեմ: Բայց ժամանակին ուշքս զուլսս հաւարեցի և յիշելով Մեր Փրկչին՝ ձեռք շուռի նրան: Ի դէպ՝ հէնց այդ ժամանակ մտեցաւ մեր վարժապետը և տեղեկանալով՝ թէ բանն ինչումն է, կամեցաւ պատժել նրան, բայց ես խնդրեցի չը պատժել: Վարժապետը քաղցրութեամբ նայեց ինձ և հեռացաւ: Ա՛խ, մայրիկ, այժմս ինչպէս ուրախ է հոգիս, որ ժամանակին կարողացայ ինձ զսպել:

Եւ մտեցաւ համբուրեց մօրը:

—Ես էլ շատ ուրախ եմ, ասաց Լիւցի-
նիան, տեսնելով՝ որ բարին քո մէջ յաղթել է
չարին:

Եւ Լիւցինիայի աչքերում արտասունքներ
երևացին: Նա ուրախ ժպտաց և արտասու-
թոր աչքերով նայում էր որդուն:

—Դու էլ սկսում ես հօրդ նմանուիլ, ասաց
նա, և այդ ինձ ուրախացնում է: Նրա նման
դու էլ չես սիրում ո՛չ հարստութիւն, ո՛չ ռաւան-
ձին զուարճութիւններ. նրա նման դու ես գե-
րազասում ես աղքատութեամբ ապրելը, սիրով
նուիրելով ուրիշին այն, ինչ կարող ես: Թո՛ղ
օգնէ քեզ Քրիստոս այդպէս անցկացնելու քո
ամբողջ կեանքը, և եթէ մեռնել հարկ լինի՝
աներկիւզ մեռնել մեր հաւատի համար:

—Ես կարծում եմ, մայրիկ, որ մահուան
երկիւղն ինձ չի սաքսափեցնիլ, մեղմօրէն ասաց
Պանկրատիոսը: Երբ յիշում եմ Յիսուսին և նրա
մարտիրոսական մահը, զգում եմ, որ ինձ հա-
մար ամեն բանից քաղցր է մեռնել այնպէս,
ինչպէս նա մեռաւ:

Լիւցինիան կանգնեց, լուռ մօտեցաւ սե-
զանին և վերցնելով նրա վրայից մի կապոց
թուղթ, ասաց որդուն.

—Մինչդեռ դու փոքր էիր, ես քեզ չեմ
տուել կարդալու Աւետարանը և Քրիստոսի վար-
դապետութեան մասին քեզ պատմել եմ միայն

բանաւոր կերպով: Այժմ դու արդէն մեծացել
ես և կարող ես ամեն բան հասկանալ, ինչ որ
գրուած է այստեղ: Քո հայրը քեզ համար է
արտագրել այս Աւետարանը և խնդրել է յանձ-
նել քեզ, երբ դու մեծանաս: Եթէ կեանքդ քեզ
համար ծանր թուի և դու չիմանաս ինչ անես,
յիշիր՝ որ Աւետարանի մէջ միշտ կարող ես գըտ-
նել քո մխիթարութիւնը և այն ցուցումները,
որոնցով պէտք է դու առաջնորդուիս: Քո ամ-
բողջ կեանքում աշխատիր յառաջ գնալ և եր-
բէք չըմտածես, թէ դու լաւ ես: Մենք չենք
կարող լինել կատարեալ, բայց կարող ենք ձգտել
լինել աւելի բարի, աւելի ազնիւ, որի համար
և Աստուած մեզ ոյժ է տուել:

Եւ մայրը բանալով Աւետարանը՝ սկսեց
կարդալ որդուն լերան քարոզը:

Ահա թէ ինչպէս էին ապրում քրիստոնե-
ակաները:

II.

Այսպէս չէին ապրում հեթանոսները:

Այդ ժամանակ մի այլ տան ստրկուհիներն
ընթրիքի սեղան էին պատրաստում: Մեծ հա-
րըստի տուն էր. մեծամեծ սենեակներ, թան-
գազին գորգերով ծածկուած յատակներ, թան-
գազին կերպասներով և ոսկեզոյն մետաքսեղէն-

ներով զարգարուած պատուհաններ: Պատուհանների մօտ, որպէս զարգարանք, դարստուած էին ոսկուց և արծաթից շինած զանազան խաղալիկներ:

Տանտէր Փաբիտը մի ուրախ և պարզամիտ մարդ էր: Ստրուկների հետ նա խստօրէն չէր վարուում և շատ չէր վիրաւորում նրանց: Նա իրենց հեթանոսական աստուածներին չէր հաւատում և տօն օրերին տաճար էր գնում միայն ի տես ժողովրդեան: Փամանակն անց էր կացնում զանազան ուրախութիւնների մէջ, խնջոյքներում, ժողովարաններում և իւր ծանօթների հետ խօսակցելով: Իւր միակ դստեր Փաբիօլային նա սիրում էր իւր հայեցակէտով, այն է՝ սիրում էր տեսնել նրան միշտ պճնուած, ընծայում էր նրան թանգագին հագուստներ, զանազան զարդարանքներ. աշխատում էր, որ նա շատ ստրկուհիներ ունենայ և հսկում էր, որպէս զի նա ոչ մի բանի կարիք չըզգայ:

Փաբիօլան մի դեռահաս գեղեցիկ էր: Նա շատ բարեսիրտ էր, բայց տաքարիւն և հպարտ: Նա սիրում էր, որ տանն ամենքն ամեն բանում իրան հնազանդէին:

Հռովմում նա խելօք և գիտնականի հռչակ էր վայելում: Նա հեթանոս չէր, որովհետև հեթանոսական աստուածներին չէր հաւատում և ծաղրում էր նրանց: Նա ասում էր, որ այդ

աստուածները գոյութիւն չունին և թէ ամբողջ հեթանոսական կրօնը մարդկանց հնարած, մտացածին բան է: Քրիստոսի վարդապետութեան մասին նա ոչինչ չըզգիտէր, լսել էր միայն, որ քրիստոնեաներին ամեն տեղ հայհոյում ու տանջում են, և նրանց անխելք էր համարում ինքը, որ հաւատում էին մի որևէ թշուառ հրէայի, որին խաչել էին:

Մի հանդիսաւոր օր Փաբիօլան իւր սնեհակում սպասում էր, թէ ստրկուհիք կըր կը գան իրան հաղցնելու: Երեք ստրկուհի մեծ հոգացողութեան մէջ էին: Սեղանների վրայ դարստած էին զանազան ոսկեայ մատանիք, մանեակներ, զինտեր և թանգագին փայլուն զարդարանքներ: Փաբիօլան պառկած էր բազմոցի վրայ՝ ձեռքին բռնած մի ոսկէ կոթաւոր դանակ: Երբ ստրկուհիները նրան մի որևէ անհաճոյ բան էին բռնում, նա նրանց հարուածում էր զանակով: Այդպէս էր հարուստ հեթանոսների սովորութիւնը, և նրանք այդ մի առանձին շարիք չէին համարում: Նրանք ստրկուհիներին մարդ չէին համարում. նրանց հետ վարուում էին զրաստների նման և կարծում էին, որ իրաւունք ունին նրանց ծեծել ու սպանել: Ստրկուհիներից մինը, Սիրա անունով, նստում էր Փաբիօլայի մօտ և նրա հագուստին ժաղաւէն էր կարում: Սիրան մի համեստ և բարե-

սիրտ աղջիկ էր. երբէք չէր տրտնջում, միշտ լռակեաց էր և աշխատում էր անդադրում: Միւս երկու ստրկուհիները վախենում էին իրենց տիրուհուց և որպէս զի նրան հաճոյանան, սկսում էին շողորթըթել և գովաբանել նրան:

— Ինչպէս կըրցանկայի, շքնադատես տիրուհի, ասաց նրանցից մէկը, գէթ հեռուից տեսնել, թէ ինչպէս ես ներկայանում դու հիւրերին քո այդ պաճուճանքի մէջ: Այդ է պատճառը, որ ամենքն էլ սիրահարում են քեզ վրայ:

— Իսկ ես չեմ կարող այդպիսի պատիւ ցանկանալ, ասաց երկրորդ ստրկուհին, մեզ ում կարժանացնէ այդպիսի բաղդի: Ես հէնց նրանով էլ բաղդաւոր եմ, որ գէթ այստեղ հրճուում եմ իմ տիրուհու տեսքով: Նա առանց արդու-զարդի էլ գեղեցիկ է:

Փաբիօլան գառնալով դէպի Սիրան՝ ասաց.

— Իսկ դու ինչ կըրցանկանայիր, Սիրա:

— Ես միայն մի բան եմ ցանկանում. լաւ կատարել իմ գործը և մարդկանց շարութիւն չանել:

— Քեզանից հաճելի խօսք հազիւ կարելի է լսել:

— Եւ միթէ դու կարօտում ես իմ գովասանքին: Գու հարուստ ես, գեղեցիկ ես և սովոր ես գովասանքների լսել նշանաւոր մարդկանցից: Ի՛նչ կարիք ունիս դու մի աղքատ ստրկուհու գովքին:

Փաբիօլան չէր կարողանում տանել այդքան համարձակ պատասխաններ մի ստրկուհու կողմից և զայրանալով ասաց Սիրային.

— Դու երեւի մոռացել ես, որ իմ ստրկուհին ես: Ես գնել եմ քեզ և կարող եմ ստիպել քեզ՝ անել այն ամենը, ինչ որ ինձ ցանկալի է: Իմ ցանկութիւնն է, որ դու ինձ գովես, — և դու պարտաւոր ես գովել. կամենում եմ, որ դու ծիծաղես, — պարտաւոր ես ծիծաղել: Դու պէտք է հասկանաս, որ ամբողջովին ինձ ես պատկանում, և դու քեզ սեպհական ոչինչ չունիս:

— Այդ ճշմարիտ է. իմ բոլոր ոյժը, իմ մարմինը, իմ բոլոր աշխատանքը — քոնն են. բայց ես իմն էլ ունիմ, որ ոչ որ ինձնից չի կարող խլել:

Փաբիօլան սկսեց ծիծաղել և ասաց.

— Այդ գուարճալի է: Դու բացի մարմնից ուրիշ ինչ կարող ես ունենալ: Այդ ի՛նչ բան է, որ ոչ որ չի կարող խլել քեզնից:

— Այդ այն է, որ իւրաքանչիւր մարդու մէջ էլ կայ: Իւրաքանչիւր մարդ բացի մարմնից ունի և աստուածային հոգի: Նա մարմնից չէ: Մարմնին է պատկանում միայն այն, ինչ որ երկրային է, մահկանացու է: Այդ մասին ասած է, «մեռալն ի մարմնոյ մարմին է և մեռալն ի հոգւոյ՝ հոգի է»: Հոգին այն է, ինչ որ դու ունիս և ինչ որ իւրաքանչիւր անհատ

ունի: Նա բնական է, ազատ և մարմնի իշխողը, տէրը: Նա ոչ սկիզբ ունի, ոչ վախճան: Նրան ամեն որ ճանաչում է և ամեն որ զգում է նրան իւր մէջ: Հէնց նրա մէջն է և իմ կեանքը. և այդ հոգին բացի Աստուածանից ոչ որ չի կարող խլել ինձնից:

Փաբիօլան դադարեց ծիծաղելուց և սկսեց լսել Սիրային և ապա հարցրեց.

—Ի՞նչ պէտք է դառնայ այդ հոգին մեր մահուանից յետոյ:

—Ես չըզիտեմ ինչ կըդառնայ. դիտեմ միայն և հաւատում եմ, որ հոգին չի մեռնում: Այն՝ ինչ որ մարմնից է, մեռնում է, բայց ինչ որ հոգուց է, նա յաւիտենական է:

Փաբիօլան ամօթ զգաց, որ այդքան երկար լսեց ստրկուհուն: Հպարտութիւնը բարձրացրեց նրա մէջ իւր ձայնը և նա կատաղած հարցրեց.

—Գու սրտեղից ես հաւարել այդպիսի ցնդարանութիւնները: Ես քեզանից աւելի խելօք եմ, շատ բազմատեսակ գրքեր եմ կարդացել, և ո՛չ մի տեղ այդ մասին չի ասուած:

—Ինձ ասել են այդ իմ հայրենիքում: Այնտեղ մարդիկ ամենքն էլ իրենց մէջ միևնոյն աստուածային հոգին են ճանաչում:

—Այդպէս, քո ասելով ուրեմն ամենքն էլ հաւասար են, զոչեց Փաբիօլան: Բայց մի՞թէ



սարուկը կարող է հաւասար լինել իր արարչին: —Մենք ամենքս հաւասար ենք իրարից: Իւրաքանչիւրի մէջ էլ աստուածային հոգին կայ, նա չի կարող զանազան լինել, այլ իւրաքանչիւրի մէջ էլ միևնոյն հոգին է:

Փաբիօլան բոլորովին բարկացաւ:

—Ամենքը հաւասար են: Երեւի կասես, որ դու էլ հաւասար ես ինձ, հա՛, պատասխանիր ինձ շուտով:

Փաբիօլան բարձրացաւ բազմոցից և սկսեց դանակը ձեռքին խաղացնել: Երկու ստրկուհիներն ա՛ն ու դողով նայում էին նրան:


Սիրան իւր բարի աչքերը յառելով Փաբիօլայի վրայ մեղմօրէն ասաց.

—Գու բարձր ես ինձնից հարստութեամբդ, գեղեցիկութեամբդ և զիտութեամբ, բայց քո հոգին էլ նոյնն է, ինչ որ իմ հոգին է—լատ հոգւոյ մենք հաւասար ենք քեզ:

Փաբիօլային այնպէս թուաց, որ Սիրան իրեն նուաստացնում է՝ նրան հաւասարեցնելով: Այդ նա չըկարողացաւ տանել: Նա բարկացաւ և ցասումից իրեն մոռանալով՝ դանակը ձգեց դէպի Սիրան: Գանակը դիպաւ նրա կուսնը: Վէրքից սկսեց արիւն հոսել: Սիրան կանգնել էր սենեակի մէջտեղը և լուռ լաց էր լինում:

Փաբիօլան ուշքի եկաւ: Նա ամօթահարուեց և սկսեց խղճալ Սիրային: Նա կամենում

2027
41



էր Սիրայից ներողութիւն խնդրել, բայց հպարտութիւնն արգելք եղաւ այդ անելու, և նա միայն ասաց.

— Գնա իմ գայեակի մօտ և ասա նրան, որ կուռզ կապէ: Ես քեզ այդչափ ցաւ չէի կամենում պատճառել:

Սիրան հեռացաւ և դուրս գալով սենեակից՝ չէմքում հանդիպեց մի մատաղահաս օրիորդի, որ հագած էր սպիտակ հասարակ հագուստ: Այդ օրիորդի գէմբը տժգոյն էր, աչքերը հեղահամբոյր, կապուտակ, և ոսկեգոյն մագերը պարզ կերպով սանրած: Այդ օրիորդին անուանում էին Ագնէսա: Նա հարուստ ծնողների աղջիկ էր և Փարիօլայի հօրեղբօր գուստրն էր համարուում: Նա, ինչպէս և Սիրան, քրիստոնեաների թուին էին պատկանում, բայց այդ մասին դեռ ոչ ոք չըզիտէր, և Փարիօլան մինչև անգամ չէր էլ կասկած տանում այդ մասին: Ագնէսան քաղցրութեամբ նայելով Սիրային, մօտեցաւ Փարիօլային:

Փարիօլան շատ էր սիրում Ագնէսային և ուրախանում էր նրան տեսնելիս:

— Այդ ինչ լաւ ես արել, Ագնէսա, որ ինձ մօտ եկար: Ընթրիքին ինձ մօտ մի նոր հիւր է գալու, Փոյրիոսը: Նա նոր է եկել Հռոմ և ամբողջ քաղաքը խօսում է նրա մասին, որ նա շատ հարուստ է և խելօք:

Ես աւելի լաւ կըհամարէի քեզ մօտ նստել, բայց եթէ այդ անկարելի է, գնանք ուրեմն հիւրերի մօտ:

— Ես էլ ուրախ կըլինէի քեզ հետ լինել, բայց ի՛նչ արած՝ պէտք է գնալ: Բայց դու միշտ էլ քո այդ սպիտակ հագուստովն ես, կասես սպիտակ ազունակ լինիս: Բայց այդ ի՛նչ է քո վրայ, նայիր, արիւն է կարծես: Այո՛, այո՛: Կը կամենաս, հրամայեմ իմ ծածկոցը բերեն քեզ համար:

— Ո՛չ, ինչո՞ւ համար: Այդ Սիրայի արիւնն է: Նա հէնց այս բոպէին օրինակ ցոյց տուց ինձ, թէ ինչպէս պէտք է խոնարհութեամբ տանել վիրաւորանքն ու ցաւը:

Փարիօլան հասկացաւ, որ Ագնէսան տեսել է իրեն Սիրային խփելիս, և թէ նրա մօտովն անցնելիս՝ Սիրան անզիտակցաբար թաթախել է Ագնէսայի հագուստը: Նորից ամօթը տիրեց նրան: Բայց նա իրան չըզիտենալ ձեացրեց և միայն հարցրեց:

— Այդպէս ուրեմն, դու կամենում ես սովորել ստրկուհուց: Այդ տարօրինակ բան է: Դու միշտ նրանց պաշտպան ես հանդիսանում: Բայց հաւատան, որ այդ արարածներն այդպիսի ուշադրութեան արժանի չեն:

— Նրանք նոյնպիսի մարդիկ են, որպիսիք մենք ենք: Նրանք էլ նոյն խելքը, նոյն սիրան

ունին: Միևնոյն Աստուածը, որ մեզ կեանք է տուել, նրանց էլ նոյնն է տուել: Ուստի և նրանք մեր եղբայրներն ու քոյրերն են:

—Ո՛չ, այդպէս չէ, գոչեց Փաբիօլան, նրանք հէնց նրա համար էլ ստեղծուած են, որ կատարեն մեր կամքը և ծառայեն մեզ: Մենք դրա համար էլ կերակրում ենք նրանց:

—Ի՛հհ, բաւական է, մի բարկանար: Դու, կարծեմ, ինքդ էլ տեսնում ես. թէ այսօր ձեզանից ո՛րն է արդարը՝ դ՞ու, թէ՛ Սիրան: Դու խփել էս նրան դանակով նրա համար, որ նա ճշմարիտն է ասել քեզ, բայց նա քեզ ոչինչ չի արել, այլ խոնարհուածեամբ, առանց բարկանալու, տանում է քո վիրաւորանքը: Մի պատասխանիր ինձ. ես քո դէմքից էլ տեսնում եմ, որ դու համաձայն ես ինձ հետ:

Փաբիօլան լռեց և ապա հարցրեց.

—Ի՞նչ է պատճառը, որ երբ ես քեզ մօտ եմ լինում, իմ հոգին միշտ լաւ տրամադրութեան մէջ է լինում: Քեզ մօտ ամենքն ուրախ են, ամենքն աշխատում են, ո՛չ որ չի հրամայում, ոչ որ չի գոռում, բայց գործն անում է: Իրաւ Ագնէսա, ես զարմանում եմ քեզ վրայ, այդ ի՛նչ զօրութիւն է, որով հարկադրում ես ամենքին սիրել քեզ և լսել:

Ագնէսան ժպտաց:

—Այդ զօրութիւնն ամեն մարդու մէջ էլ

կայ, բայց ամենքը նրանից չեն կամենում օգտուել:

—Այո, այո, Սիրան էլ նոյնն է ասում: Բայց գիտես, նա արդար և բարի աղջիկ է: Ես վարակիչ տենդով բռնուած էի, ինձ մօտ ոչ որ չէր կամենում գալ: Իմ գայեակը ծեծում էր ստրկուհիներին, որ ծառայեն ինձ: Միակ Սիրան էր, որ չըթողեց ինձ և գիշեր ցերեկ ինձ մօտ էր լինում:

—Տեսնում ես ահա, ուրեմն ի՛նչպէս կարելի է չըսիրել նրան:

—Սիրե՛լ... բայց միթէ կարելի է ստրկուհուն սիրել: Ես նրան վարձատրեցի, ահա և ամենը:

—Օ՛հօ, Փաբիօլա, այդ ի՛նչ ես ասում դու: Նայի՛ր կենդանիներին. նրանք ես ընտելանում և սիրում են այն մարդուն, որն իրենց վազարչում և խնամում է: Ի՞նչպէս կարելի է, սր մենք մարդիկս նոյնը չանենք. ի՛նչպէս չըսիրենք այն մարդուն, որը պահում ու խնամում է մեզ:

Փաբիօլայի համար այդ դրութիւնն անտանելի էր և նա դրան ոչինչ չըպատասխանեց:

—Լա՛ւ, զնանք, ժամ է արդէն, ասաց նա:

—Ինչու դու ոչ գինտերդ ես կրել և ո՛չ մանեակներդ: Չլինի՛ թէ մոռացել ես:

—Ո՛չ, չեմ մոռացել, բայց չեմ էլ կամենում:

III

Օրիորդները մտան սենեակ, ուր արդէն ընթրիքի սեղանը պատրաստ էր: Արդէն բաւականաչափ հիւրեր էին հաւարձել և ամենքն էլ շքեղ հագնուած էին: Միայն երկուսն էին հասարակ հագնուած, և իրենց շատ լուրջ էին պահում: Նրանք քրիստոնեաներ էին, բայց ներկայ եղողներից ոչ ոք չըզիտէր այդ, բացի Ագնէսայից: Նրանցից մէկը՝ Տորկուատոսը դեռ շատ երիտասարդ էր, միւսը՝ Սերաստիանոսը՝ աւելի հասակաւոր: Սերաստիանոսը հարուստ էր և կայսեր սիրելին էր համարում: Այդ տեղ էր և Փոյլբիոսը, որի մասին Փարիօլան ասել էր: Փոյլբիոսը գեղեցիկ դէմքով մի երիտասարդ էր, բայց չար ու անհաճոյ: Նրա զբաղմունքը քրիստոնեաներին լրտեսելն էր և երբ նրանց սպանում էին, նրանց կայքերն, իբրև վարձատրութեան գին, ստանում էր ինքը:

Ընթրիքի ժամանակ հիւրերը խօսակցում էին չռովմում նոր կառուցուող մեծ շինութեան մասին:

—Այդ շինութիւնը դեռ չուտ չի վերջանալ, ասաց Փոյլբիոսը: Ես լսել եմ, որ այդ գործի համար կամենում են քրիստոնեաներին բերել հանքերից և բանտերից:

—Վաղուց պէտք է հասկանային այդ, քան թէ ձրի կերակրէին նրանց բանտերում, ասաց

հիւրերից մինը: Մինչդեռ գազաններին կուր չեն եղել, կաշխատէին և գոնէ օգուտ կըլինէր:

—Ինչո՞ւ այդ աշխատանքի համար քրիստոնեաներին են ընտրել և ոչ ուրիշ յանցագործներին, հարցրեց Փարիօլան:

—Նրա համար, որ քրիստոնեաներն աւելի լաւ են աշխատում: Նրանց գլխին հարկ չըկայ փայտը ձեռքիդ կանգնել: Նրանք մէկը միւսին չեն թշնամանում, ինչպէս միւս յանցագործները. երբէք չեն դանդատուում, երբ նրանց ծեծում ու անպատուում են:

—Ա՛յ, զարմանալի բան: Ո՞րտեղից է այդքան համբերութիւնը նրանց մէջ, բացականչեց Փարիօլան:

—Այդ խօսքերն արտասանելիս՝ Ագնէսան իւր հայեացքը նետելով Սերաստիանոսի վրայ՝ մատը դրեց շրթունքին: Վերջինս հասկացաւ, որ նա խորհուրդ է տալիս իրեն՝ խօսակցութեան մէջ չըմտնել: Ես զսպեց իրեն և զլուխը կախեց:

Բայց Փոյլբիոսը նկատելով այդ՝ հարցրեց Սերաստիանոսին.

—Ես լսել եմ, որ բոլոր երիտասարդները շատ են սիրում հանդիսատես լինել արինաւից գուպարներին: Դուք ես, երեի, ուրախութեամբ սպասում էք այդպիսի դէպքերի:

—Ո՛չ, այդպիսի խաղեր ես չեմ սիրում, —պատասխանեց Սերաստիանոսը: Գազանների

մարդկանց պատառոտելու տեսարանի մէջ եւ ոչ մի հաճոյք չեմ գլուծւում:

Փոյլըրիոսը նայեց Սեբաստիանոսին:

— Ափսոս. ուրեմն դու հանդէսներին չեմ լինիլ:

— Եթէ դու այնտեղ տեսնես էլ ինձ, գըժ-բաղդ քրիստոնեաների մօտ կըտեսնես և ոչ թէ նրանց, որոնք գազանների հետ միասին գուար-ճանում են թշուառների տանջանքները տեսնելիս:

— Զնտ լաւ խօսեց Սեբաստիանոսը, ասաց Փարիօլան: Դու միշտ լաւ ես խօսում:

Փոյլըրիոսը լռեց և հայեացքը ձգեց հիւրերին:

— Ի՞նչ կարիք կայ խնայել քրիստոնեաներին, ասաց հիւրերից մինը: Նրանք էլ մեզ չեն սիրում և եթէ իրաւունք ունենային, մեզ ամենքիս էլ կրկնորէին:

— Մի՛թէ նրանք մեզ քիչ չարիք են պատ-ճառել: Ո՞վ է այրել Հռովմը. — միայն նրանք, — գոռաց մի ուրիշը:

Տորկւատոսի գոյնը թռաւ այդ խօսքերը լսելիս. վեր ցատկեց տեղից, սեղմեց բռունցքները, բայց ուշքի դալով՝ նստեց:

Փոյլըրիոսը նկատեց այդ: Այն ևս նկատել էր, որ Տորկւատոսը գինի շատ է լամիլ: Նա մի բաժակ ևս լցրեց և չնայելով նրա երեսին՝ դիտ-մամբ ասաց.

— Քրիստոնեաներն էլ աւելի վատ յան-

ցանք են գործում: Նրանք սպանում են մեր երեխաներին և խմում նրանց արիւնը:

Տորկւատոսը չըկարողացաւ զսպել իրեն: Նա վեր ցատկեց տեղից և գոռաց.

— Դու սո՛ւտ ես խօսում, այդ ճիշտ չէ:

— Բայց դու սրտեղից դիտես, որ այդ ճիշտ չէ, հարցրեց Փոյլըրիոսը:

— Ես ինքս էլ քրիստոնեայ եմ, և դիտեմ այդ: Այո՛, արէք ինձ հետ, ինչ որ կամենում էք. ես ամեն բանի պատրաստ եմ, բարձրա-ձայն ասաց Տորկւատոսը:

Բոլոր հիւրերը մնացին ապշած և յուռ նայում էին Տորկւատոսին: «Էլ չես պըրծնիլ ձեռքիցս, մտածում էր Փոյլըրիոսը, — ինձ էլ այդպիսի մէկն է հարկաւոր: Վատ քրիստոնեայ ես, որ միայն հարբած ժամանակն ես գոռում, որ ամեն բանի պատրաստ ես քո հաւատի համար:»

Հիւրերը վախեցան, չըլինի թէ մէկը լըր-տեսէ իրենց, որ նրանք քրիստոնեաների հետ ծանօթ են, և սկսեցին ցրուել իրենց աները: Փոյլըրիոսը նոյնպէս դուրս եկաւ և գնաց Տորկւատոսի յետևից: Ճանապարհին նա հասաւ նրան և կանչեց իւր մօտ:

Փոյլըրիոսի տանը Տորկւատոսն էլի խմեց և բոլորովին գինովցաւ:

Փոյլըրիոսն իմացաւ, որ Տորկւատոսի մօտ ուրիշի փողեր կան վաճառք անելու համար և

յիշելով՝ որ նա սաստիկ մոլութիւն ունի գէպի թղթախաղը, համոզեց այդ հարբածին խաղալ, տարաւ մինչև նրա վերջին կողէկը, և ապա սկսեց գրգռել նրան «էլ այսուհետև դու ի՞նչ պիտի քրիստոնեայ ես. գինի խմում ես, թուղթ խաղում ես, ուրիշի փողերը տանուլ ես տալիս: Ի՞նչ կասեն քրիստոնեաները, երբ իմանան այդ մասին:

Տորկւատոսը բռնկուեց և բարկութեամբ պատասխանեց.

—Քեզ ի՞նչ կայ: Թող ինձ:

—Հէնց բանն էլ նրանումն է, որ դու այժմ իմ ձեռքին ես: Ես տարայ քո փողերը և գիտեմ այժմ քո գաղտնիքը: Մնում է միայն, որ լրտեսեմ քեզ, և դու կորած ես: Հը՛, իսկ այժմ մի լսւն նայիր քեզ վրայ, տես, դու հարբած ես, ծուռ ու մուռ ես անում. պատրանատ ես այժմ այդպիսի գրութեամբ հրապարակ գնալ և խոստովանել, որ դու քրիստոնեայ ես: Կարո՞ղ ես այժմ վերադառնալ քրիստոնեաների մօտ, որոնց դու մատնեցիր:

Տորկւատոսը յուսահատութիւնից վայր ընկաւ աթոռի վրայ և ծանր հառաչեց:

Փոյլբիտսը նստեց նրա մօտ և կեղծաւորութեամբ ասաց.

—Լսիր ինձ, Տորկւատոս, և դու ազատւած կըլինիս: Հարուստ բնակարան կունենաս,

լաւ ուտել խմել, փող,—մի խօսքով՝ ո՞չ մի բանի կարիք չես ունենալ. միայն այս պայմանով, որ վաղը գնաս ձեր քրիստոնեաների մօտ, քեզ հետ պատահածի մասին ոչինչ չըխօսես, և երբ ես նրանց մասին քեզ հարց ու փորձ անեմ, դու ամեն բան ասես, ինչ որ գիտես:

—Ի՞նչ, մատնե՛լ, .. այդ նշանակում է դաւաճանել, լրտես լինել,—ասաց Տորկւատոսը կակազելով:

—Այդ ի՞նչպէս ուզում ես անուանիր: Ընտրիր երկուսից մէկը՝ կամ մահ, և կամ ան, ինչ որ քեզ առաջարկում եմ:

—Ա՛խ, Աստուած, բացականչեց Տորկւատոսը հեկեկալով, ես կորցրի հողիս, բայց տեսնում եմ, որ էլ ոչինչ չեմ կարող անել:—Ջրամայիր, ինչ որ կամենում ես, միայն թէ ինձ չըմատնես:

Երբ գինու ազդեցութիւնը դուրս եկաւ նրա գլխից, այն ժամանակ միայն հասկացաւ, թէ ինչ փորձանքի մէջ է ընկել ինքը: Նա սկսեց ինքն իրենից ամաշել և կատաղութեամբ լցուեց գէպի Փոյլբիտսը: Մի կողմից զզջումը, և միւս կողմից շարաշար մահուան ահ ու տագնապը տանջում, կրծում էին նրա սիրտը:

Տորկւատոսը հեկեկում էր երեխայի նման: Փոյլբիտսը ձեռքը դնելով նրա ուսին՝ հանդարտութեամբ ասաց.

— Բաւական է. գնահ այժմ տուն, ես քեզ կուզեկցեմ:

Տորկատոսը լուռ գնում էր իրեն տանջողի հետ:

IV

Փարիօլան Սիրային դանակով խփելուց յետոյ՝ նրան աւելի մօտեցրեց իրեն: Նա սկսեց հասկանալ, որ ստրկուհուն էլ կարելի է սիրել, որ նա ես մարդ է: Եւ Փարիօլան Սիրային տունց մի առանձին սենեակ և սկսեց նրան աւելի քիչ ծանրաբեռնել ծանր աշխատանքներով: Սիրան գրանով չըհպարտացաւ միւս ստրկուհիների առաջ և նրանց հետ միշտ քաղցր ու պարզ էր վարում:

Մի անգամ Փարիօլան ասաց Սիրային, որ նա իրեն համար մի գիրք կարդայ: Սիրան սկսեց կարդալ, բայց մի քիչ կարդալուց յետոյ՝ փակեց գիրքն ու ասաց.

— Ես չէի կամենալ այս գիրքը կարդալ: Այն մարդը, որ գրել է սրան, ծաղրում է այն առարկաները, որոնք թանգագին ու սուրբ են ամենքի համար:

Փարիօլան սկսեց ծիծաղել:

— Ապա արի մի ծիծաղիր: Բայց տեսնում ես, որ գտնուել է մի մարդ, որ ծաղրում է դրանց: Ամեն մարդ իւր հասկացողութեամբ է գտնում:

— Ի հարկ է՝ խօսել ու գրել կարելի է, ինչ որ կամենաս, միայն այդ յիմարութիւն է: Նա այնպիսի առարկաների վրայ է ծիծաղում, որոնց ինքը չի յարգում և ընդունում, բայց որին բոլոր մարդիկ ընդունում են:

— Բայց դրանք ինչպիսի առարկաներ են: Իմ կարծիքով՝ իւրաքանչիւր մարդ անում է այն, ինչ որ արժան է համարում:

— Ո՛հ, Աստուծոյ կամքը կայ. և եթէ մարդիկ չեն կատարում այդ կամքը, նրանք չեն ապրում, այլ մեռնում են:

— Այդ ի՞նչ աստուածային կամք է:

— Ես այդ ամենահասարակ առարկաների վրայ ցոյց կըտամ քեզ: Աստուծոյ կամքն է՝ որ մարդ ծնւում է, մեծանում ու մեռնում է. ուտում ու խմում է: Փորձիր ո՛չ ուտել, ո՛չ խմել և դու կըմեռնես:

— Այդ շատ պարզ է, այդ իւրաքանչիւր որ հասկանում է և իւրաքանչիւր որ էլ կատարում է այդպիսի աստուածային կամքը:

— Եթէ այդպիսի հասարակ բաների մէջ Աստուծոյ կամքը կայ, ուրեմն նա կայ և ամեն բանի մէջ: Աստուծոյ կամքը երևում է և այս բանի մէջ, թէ ի՞նչ պէտք է դառնայ մարդկային կեանքը: Ես իսկոյն ցոյց կըտամ քեզ, որ մարդս չի կարող չըկատարել Աստուծոյ կամքը: Նայիր այն կանանց, բայց ոչ հարուստներին,

որոնք իրենք ոչինչ չեն գործում, այլ ստիպում են ուրիշ մարդկանց՝ իրենց փոխարէն աշխատելու, այլ ազրատ կանանց եմ ասում: Նայիր, տես ի՞նչպէս է անցնում ազրատ կնոջ կեանքը: Ո՛րքան տանջանք է կրում ու տանում նա իւրաքանչիւր անգամ մանուկ ծնելիս. ամենասուկալի տանջանքներ, տանջանքներ՝ ո՛չ ի ցոյց մարդկանց և ո՛չ նրանց գովքին արժանանալու համար, այլ միայն ուրիշներին—նոր աշխարհ եկողներին համար: Նա կերակրում է մանուկներին, մեծացնում ու խնամում նրանց. ոչ հանգըստութիւն գիտէ, ո՛չ դադար: Ո՛չ որ չի գովում նրան իւր արածի համար: Որդիքը մեծանում են, և յաճախ նոյն իսկ մօրը դատապարտում: Նա առաջուց գիտէ այդ, բայց այնուամենայնիւ նա այդ բոլորն էլ անում է: Նրան հարկաւոր չեն մարդկանց գովասանքները, նա գիտէ, որ այդպէս է Աստուծոյ կամքը, գիտէ նոյնպէս, որ դրա մէջն է երջանկութիւնը: Աստուած այնպէս է կարգադրել, որ բոլոր մարդիկ ապրեն միասին. այդ ևս նրա կամքն է: Բայց որպէս զի հնարաւոր լինի մարդկանց միասին ապրելը, անհրաժեշտ է, որ նրանք ապրին սիրով և համաձայնութեամբ, օգնելով մէկը միւսին և ոչ թէ թշնամանելով կամ ոչնչացնելով իրենց նմաններին:

—Սպասիր, սպասիր: Դու ասում ես, որ

այդ ևս Աստուծոյ կամքն է: Ի՞նչ է պատճառն ուրեմն, որ մարդիկ այդպէս չեն ապրում, այլ կռում ու թշնամանում են: Այդ էլ ի՞նչպիսի աստուածային կամք է, եթէ այն չի կարելի կատարել:

Աստուածային կամքը մի որ և է հրաման չէ, որ ոչ մի կերպ հնարաւոր չլինի չըկատարելը: Ամեն ինչ կարելի է չըկատարել: Կարելի է նոյն իսկ ո՛չ ուտել, ո՛չ խմել, բայց այն ժամանակ կըմտնես: Այդպէս և առաջին դիպուածում: Կարելի է ամբողջ օրով բարկանալ և ծեծել մարդկանց, միայն դրա համար կեանքդ կըկորցնես, բայց գիտես, որ կեանքը երջանկութիւն է, բայց երջանկութիւնը մարդու համար նրանում չի կայանում, որ ամբողջ օրով բարկանայ:

—Բայց այդ ի՞նչպիսի Աստուած է: Դու ի՞նչպէս ես ճանաչում նրան:

—Աստուծն ոչ որ երբէք չի տեսել: Մեզանից իւրաքանչիւրի մէջ կայ հոգի, որով մենք ճանաչում ենք Աստուծուն: Մեր այդ հոգին չըգիտենք՝ որտեղից է գալիս և ո՛ւր է գնում: Նա հոսում է առատօրէն, ուր կամենում է. ճանաչում ես նրան, բայց և չես տեսնում: Մեր այդ հոգին որ կայ, կեանքի փառքն է, որովհետեւ նա է, որ տանում է մեզ դէպի Աստուծոյ ճանապարհը: Ծառայել Աստուծուն՝ մենք պարտաւոր ենք և՛ հոգւով, և՛ գործերով:

— Ինձ շատ հաճելի է, Սիրա, այդ ամենը, ինչ որ դու խօսում ես քո Աստուծոյ մասին: Ինձ էլ սովորեցրու ծառայել և երկրպագել նրան: Նա սրբախի գոհեր է պահանջում:

— Նրան գոհեր հարկաւոր չեն. գոհեր հարկաւոր են միայն անգուլթ Աստծուն: Իսկ սէրն է միակ այն ճանապարհը, որ տանում է դէպի իմ Աստուած:

Այդ միջոցին սենեակ մտաւ Ագնէսան: Սիրան վեր կացաւ և գուրս գնաց, որպէս զի նրանց չըխանդարէ:

Ագնէսան բարեկեց և հարցրեց.

— Ինչի մասին էիր խօսում:

Փաբիօլան կարմրեց: Նա չըկամեցաւ խօստովանել Ագնէսային, որ Սիրայի խօսքերն իրեն հոգին շարժել են:

— Յետոյ կասեմ, Ագնէսա. բայց ի դէպ, ես վաղուց կամենում էի ասել քեզ, որ քաղաքումս շատ օտարոտի կերպով են խօսում քո տան մասին: Ես վաղուց է քեզ մօտ չեմ եղել, ուստի չըգիտեմ, սրբան իրաւացի է այդ: Ասում են, որ դուք ապրում էք շատ աղքատ, ուտում էք հասարակ և ինքներդ էլ աշխատում էք: Ի՞նչ է, կամենում էք աւելի շատ փող զիղել:

Ագնէսան ժպտաց.

— Ո՛չ, Փաբիօլա, մենք փող չունենք: Մեր բոլոր աւելորդը մենք տալիս ենք այն մարդ-

կանց, որոնք ուտելու ոչինչ չունին, ուղարկում ենք բանտերը և այլ և այլ տեղեր:

— Այդ ինչպիսի կեանք է ձեր կեանքը. այդ ուղղակի տանջանք է՝ զրկել իրեն ամեն բանից:

Ագնէսան ծիծաղից թուլացաւ:

— Եթէ միայն այդ տանջանք լինէր. բայց ո՞վ է մեզ հարկադրում այդպէս ապրել:

— Ձեմ հասկանում, այդտեղ ինչ հաճելի բան կայ:

— Դու ևս ապրիր և կիմանաս, արդեօք ուրախալի է այդպէս ապրելը, թէ ոչ:

— Բայց դու գիտես, որ ամենքը ձեզ վրայ ծիծաղում են և մինչև անգամ ասում են, որ դուք քրիստոնեաներ էք: Ես, ի հարկէ, շատ բարկացայ, երբ այդ լսեցի և ասացի, որ այդ ամենն էլ ճիշտ չէ:

— Ինչո՞ւ ես բարկանում:

— Չէ որ ես ճանաչում եմ քեզ: Մի՞թէ ես կարող եմ մտածել, որ դու համամիտ ես քրիստոնեաների հետ: Չէ որ նրանք չարագործներ են, զործում են զանազան յանցանքներ, անգամ երեխաներ են սպանում:

Ագնէսան տխրութեամբ նայելով Փաբիօլային՝ ասաց.

— Ինչո՞ւ ես այդպէս խօսում, Փաբիօլա: Չէ որ դու չես ճանաչում քրիստոնեաներին և

Handwritten signature

նրանց վարդապետութիւնները: Այդ մասին չը խօսենք: Լաւն այն է ասես, ինչի մասին էիր խօսում Սիրայի հետ:

—Նա պատմում էր ինձ իւր Աստուծոյ մասին:

—Հը, ի՞նչպէս է:

—Նա ասաց, որ Աստուծուն մենք ճանաչում ենք միայն մեր հոգևով, որ իւրաքանչիւր մարդ էլ ունի, և որ Նրան պէտք է ծառայել միայն սիրոյ գործերով: Դ՞ո՞ւ ինչ կարծիք ունիս այդ մասին, Ազնէսա:

Ազնէսան ուշի ուշով նայելով Փաբիօլային, ասաց մեղմօրէն.

—Ես ևս հաւատում եմ այդ միևնոյն Աստուծուն: Ուրիշ Աստուած չըկայ և չի էլ կարող լինել:

—Դ՞ո՞ւ ևս. այ գարմանալի բան: Ասա՛, չը կայ արդեօք մի այնպիսի գիրք, ուր գրուած լինէր այդ մասին: Ես կըկարդայի:

—Մենք ունինք այդպիսի մի գիրք, մենք նրան Աւետարան ենք ասում: Նրա մէջ գրուած է Քրիստոսի կեանքը և նրա վարդապետութիւնը: Այնտեղ ամեն բան կայ:

—Քրիստոսի... գոչեց Փաբիօլան սարսափահար և երեսը ծածկեց ձեռքերով: Թ՞ո՞ղ, Ազնէսա, մի խօսիր, թ՞ո՞ղ խելքս զլուխս հաւարեմ:

Փաբիօլան լսել էր, որ քրիստոնեաներն Աւետարան ունին և որ նրանք հաւատում են Քրիստոսին, և յանկարծ Ազնէսան խօսում է նոյնպէս Քրիստոսի մասին... Նշանակում է՝ նա քրիստոնեայ է, Սիրան ևս քրիստոնեայ է: Բայց չէ՞ որ քրիստոնեաներն յանցագործներ են, նա ամենից այդպէս է լսել, բայց այդ մարդիկը —բարի են, աւելի բարի իրենից: Բայց եթէ քրիստոնէական վարդապետութիւնը լինի նրանց այդպէս բարի դարձրած: Եթէ այդպէս է, ուրեմն քրիստոնէական վարդապետութիւնը լաւ է և ոչ վատ: Բայց ինչո՞ւ ամենքը հայհոյում և սպանում են քրիստոնեաներին: Ո՛չ, ո՛չ, այդտեղ մի թիւրիմացութիւն կայ:

Ազնէսան հասկացաւ, ինչ որ տեղի էր ունենում Փաբիօլայի հոգու մէջ: Նա չըկամեցաւ աւելի խօսել այդ մասին. «Թ՞ո՞ղ, մտածում էր Ազնէսան, թ՞ո՞ղ հանդարտուի նրա հոգին. ամեն բան մի անգամից չի կարելի յայտնել»:

Եւ Ազնէսան կանգնելով՝ ասաց.

—Դու մի ուրիշ տեսակ ես, Փաբիօլա, բայց ժամանակ է ինձ էլ տուն գնալու: Մնաս բարեաւ, ես էլի կըզամ քեզ մօտ:

Փաբիօլան չըպահեց Ազնէսային:

—Թ՞ո՞ղ գոնէ ես քեզ ուղեկցեմ:

Նրանք դուրս եկան սենեակից և գնացին դէպի պատշգամբը: Ճանապարհին բացուած

դռան միջով նրանք տեսան Սիրային մի ուրիշ աղջկայ հետ: Այդ աղջկանն անուանում էին Յիցիլիա: Նա մի աղքատ ու կոյր աղջիկ էր, որ ամեն օր գալիս էր Սիրայի մօտ, իսկ Սիրան իւր ճաշից միշտ նրան բաժին էր հանում: Յիցիլիան նոր էր վերջացրել ուտելը և Սիրային ինչ որ պատմում էր, իսկ Սիրան քնքշութեամբ սանրում էր նրա մազերը և հիւսում ծամերը:

Ազնէսան կանգ առաւ դռան գիմացը և Փարիօլային նշան արաւ, որ լռէ: Սիրան թիկունքը դէպի նրանց դարձրած լինելով՝ չէր կարողանում տեսնել նրանց: Յետոյ նա լուացաւ Յիցիլիայի ձեռքերն ու ոտները և հագցրեց նրան իւր հագուստը: Այդ բոլորն անում էր նա այնքան քաղցր ու սիրալիք, որ կարծես թէ՛ Յիցիլիան նրա հարազատ մայրը լինէր:

Փարիօլան դարմացաւ: Նա երբէք չէր տեսել, որ ստրկուհին յօժարութեամբ, առանց որ և է հրամանի, այդպէս խնամէր կոյր մուրացկանին:

Առաջ անցնելով՝ Փարիօլան ասաց Ազնէսային.

— Սիրան բարի սիրտ ունի, միայն ինչն է նա իւր ճաշը մուրացկաններին տալիս. նա այդպիսով նրանց երես կըտայ: Աւելի լաւ կը լինէր, որ նա այդ ծախէր, հաց գներ և աւելի շատ աղքատներ կըկերակրէր և աւելի մեծ օգուտ կըտար մարդկանց:

— Ո՛չ, Փարիօլա, սիրոյ գործերին շահի տեսակէտից չըպէտք է նայել: Իւրաքանչիւր բարի գործ կարելի է պախարակել և ասել, թէ կարելի էր աւելի լաւն անել: Այստեղ գնահատում է ո՛չ թէ օգուտը, այլ այն՝ թէ Սիրայի հոգու մէջ գութ կայ դէպի այդ կոյրը: Երբ դու կարգաս Աւետարանը, կիմանաս՝ թէ ինչ է ասել այդ մասին Քրիստոս: Մի կին խղճաց Քրիստոսին և նրա ոտների վրայ թափեց թանգազին իւղը, սրբեց նրա ոտներն իւր մազերով և լաց եղաւ: Բայց Քրիստոսի աշակերտներից մէկը՝ Յուզան՝ սկսեց դատապարտել նրան, որ նա առանց մտածելու կորցրեց այդքան բարիքը: Քրիստոս էլ ասում է. «Այդտեղ կարևոր չէ օգուտը, այլ այն, որ այդ կինը խղճաց ինձ, այնպէս խղճաց, որ տուաւ այն ամենը, ինչ որ ունէր»: Այդ է իսկական բարութիւնը և մարդկանց միայն սյուրբիսի բարիք է հարկաւոր: Եւ ամեն ժամանակ, երբ մարդիկ յիշեն ներկայ սիրոյ մասին, կը յիշեն և այդ կնոջ մասին:

Փարիօլան հասկացաւ, ինչ որ ասում էր Ազնէսան, և Սիրան էլ աւելի սիրելի դարձաւ նրան: «Ինչքան բարի է նա. չափազանց լաւ ինձանից: Եւ ի՞նչպէս կարողացայ ես այն ժամանակ խփել նրան:

Երբ Ազնէսան հեռացաւ, Փարիօլան գնաց Սիրայի մօտ: Սիրան միայնակ էր:

—Սիրա, ես հիմա հասկացայ, որ մենք մի Աստուած ունինք, որ մենք ամենքս Նրա որդիքն ենք և հաւասար միմեանց: Ես յիշում եմ, ինչ որ դու ասել ես ինձ այդ մասին, բայց ես քեզ խփեցի: Սիրա, ես հաւատում եմ որ Աստուած կներէ ինձ այդ, դու էլ ներքի ինձ, սիրելիդ իմ: Ի՞նչպէս կարողացայ ես քեզ խփել, այ խեղճ:

Եւ Փարիօլան արտասուքն աչքերին՝ ընկաւ Սիրայի դիրկը: Սիրան էլ ամուր գրկեց նրան և արտասուածոր աչքերով ասաց.

—Փարիօլա, իմ սիրելի քոյր, բայց միթէ կարելի է չներել քեզ: Ես վաղուց է ներել եմ: Ես այժմ միայն ուրախանում եմ, որ դու զոջում ես Աստուծոյ առաջ:

V

Մի անգամ երեկոյեան, երբ արդէն բոլորովին մութն ընկել էր, փողոցով գնում էին Սեբաստիանոսն ու Պանկրատիոսը և ցածր ձայնով խօսակցում էին:

Պանկրատիոսն ասում էր, թէ սրբան ծանր է, որ քրիստոնեաներին ամեն տեղ հայհոյում են, հնարում են նրանց վրայ զանազան ստեր, իսկ ժողովուրդն էլ հաւատում է այդ յերկրածններին:

Սեբաստիանոսը դրան պատասխանեց.

—Ի՞նչ անենք, Պանկրատիոս, պէտք է համբերենք: Երբ և իցէ կըհասկանան մարդիկ Քրիստոսի վարդապետութիւնը և ճշմարտութիւնը կըպարզուի նրանց համար, բայց առ այժմ կանենք, ինչ որ կարող ենք:

Յանկարծ լուծեան մէջ մի զարհուրելի մռնչիւն լսուեցաւ: Նրանք սարսափեցին, իսկ Պանկրատիոսը հարցրեց.

—Այդ ի՞նչ ձայն է:

—Այդ առիւծն է մռնչում: Այսօր վայրենի գազաններ են բերել՝ մեզ նրանց հետ կուռեցընելու, մեզ գազանախուր անելու համար: Ահա մեզ հրաւէր գէպի գործ. ցոյց տանք գործով մեր հաւատը: Նրանից աւելի լաւ բան չի կարող լինել, քան մարդկանց գործով ցոյց տալը՝ թէ սրտեզ է արգարութիւնն ու ճշմարտութիւնը:

—Սեբաստիանոս, ես քանիցս կամեցել եմ հարցնել քեզ, թէ այդ ի՞նչպէս բան է, դու ասում ես՝ գործով պիտի ցոյց տանք մեր հաւատը, իսկ ինրդ ամենքի առաջ չես յայտարարում, որ դու քրիստոնեայ ես:

—Դու զիտես, Պանկրատիոս, որ կայսրն ինձ սիրում է և այդ պատճառով ձեռք չի տալիս իմ ծանօթ քրիստոնեաներին, թէև գլխի է ընկնում, որ նրանք քրիստոնեաներ են: Եթէ ես ասեմ՝ թէ քրիստոնեայ եմ, ինձ իսկոյն կը-

սպանին և իմ եղբայր քրիստոնեաներին էլ Նոյն-
պէս կըտանջեն: Ի՞նչ հարկ կայ դիտմամբ մատ-
նել մեզ և նետուիլ մահի գիրկը, և շատ մարդ-
կանց կորստեան պատճառ դառնալ: Ինձ դեռ
չեն ստիպում իմ խղճի հակառակ վարուիլ, ես
էլ լռում եմ: Բայց երբ կստիպեն, այն ժամա-
նակ ես կըհրաժարուիմ ամենից և կասեմ, որ ես
քրիստոնեայ եմ և թէ մեր հաւատը պատուիրում
է կատարել Աստուծոյ՛ կամբը և ո՛չ մարդկանցը:

— Դու ուղիղ ես ասում, Սերաստիանոս,
ինչո՞ւ ինքներս գնանք դէպի մահը, մինչդեռ
նա այնքան էլ հեռու չէ մեզանից:

Նրանք շուտ եկան դէպի մի խուլ անկիւն
և բաղխեցին մի տնակի դուռ: Դուռը բաց ա-
րաւ մի բարձրահասակ ալևոր, բայց հանգիստ ու
վշտահար դէմքով ծերունի: Դա Դիոնիսիոսն էր,
գերեզմանահատը և քարանձաւների ծառան,
ուր ապրում էին քրիստոնեաներն իրենց հա-
լածանքների ժամանակ:

— Պապիկ, առաջնորդիր մեզ դէպի քա-
րանձաւները: Ահա շուտով կըգայ և մեր մի ու-
րիշ ընկերը, ասաց Սերաստիանոսը:

— Ինչո՞ւ չէ, կարելի է: Բայց ո՞վ է ձեր
ընկերը:

— Տորկատոսը. նա նոր է քրիստոնեայ
դարձել և կամենում է տեսնել մեր քարան-
ձաւները:

Ծերունին դէմքը խոժոռած նայում էր իւր
երկու հիւրերին:

— Դուք նրան լու էք ճանաչում: Նա ինձ
այնքան յուսալի չէ լծում: Նա երիտասարդ է.
մէկ էլ այսօր պատահեցի նրան փողոցում Փոյլ-
բիոսի հետ, բայց Փոյլբիոսն արդէն մեր կողմ-
նակից չէ:

Սերաստիանոսը մտածմունքի մէջ ընկաւ,
իսկ Պանկրատիոսն ասաց.

— Այդ ոչինչ, ի՞նչ կըլինի, եթէ մարդ մար-
դի հետ խօսէ: Նա շատ ժամանակ չէ՛ մեր հա-
ւատն ընդունել է, այդպէս հօ չի կարող մի
անգամից հեռանալ իւր ծանօթներից: Հէնց
այժմ ի՞նչպէս մերժէ նա: Մարդուն անպատ-
ւելն էլ չէ՞ որ լաւ չէ:

Հէնց այդ խօսքերը վերջացրեց լծէ չէ՛
մօտեցաւ և Տորկատոսը: Դիոնիսիոսն այլ ևս
չըխօսեց. լապտերը վառեց, բաց արաւ յայտ-
նի ծածկոցը և ամենքն սկսան ներքև իջնել:

Ներքևում գտնուում էին անցքեր, որոնք
փողոցների նման մերթ կտրում էին միմեանց,
մերթ գարձեալ բաժանում: Տեղ-տեղ կողքից
փորուած էին սենեակներ, յետոյ նորից անց-
քեր, անվերջ անցքեր: Այդ անցքերի պատերի
մէջ քրիստոնեաները թաղում էին իրենց նա-
հատակներին, որոնք նահատակում էին հով-
մայեցւոց կայսրների հրամանով: Չատ գերեզ-

մանները վրայ արձանագրութիւններ կային:

Դիոնիսիոսը կանգ էր առնում այլ և այլ գերեզմանների առաջ և պատմում էր, թէ ինչ մարդ է այդտեղ հանգչողը, ինչպէս է ապրել և ինչպէս մեռել: Այդտեղ կային մարդիկ՝ ամենքն էլ ամուր հաւատքի տէր, որոնք երկիւղ չէին կրել մահից և որոնք մեռել էին Աստուծոյ արգարութեան համար: Եւ այդպիսիների թիւն այդտեղ շատ էր: Կային երիտասարդներ ու ծերեր, կային մինչև անգամ 12 տարեկաններ, կային և ամբողջ գերդաստաններ, որոնք մարտիրոսուել էին իրենց փոքրիկ մանուկների հետ միասին:

Դիոնեսիոսը գնում էր առջևից Պանկրատիոսի հետ, իսկ Սեբաստիանոսը Տորկատոսի հետ միասին: Սեբաստիանոսն աչքերը չէր հեռացնում Տորկատոսից և նկատում էր, որ նա իւրարանչիւր շրջատեղում պատերի վրայ նշաններ էր անում:

Ստորերկրեայ սենեակներից մէկում Դիոնեսիոսը բարձրացրեց լապտերը և ամենքը տեսան պատից կախուած մի պատկեր:

Դիոնիսիոսն սկսեց պատմել:

— Ահա այս պատկերի վրայ նկարուած է մի բարի հովիւ: Նա տանում է իւր ուսերի վրայ մորթեալ ոչխարը և ուրախ է, որ վերջապէս գտել է նրան: Լաւ պատկեր է: Այդպէս և

մեզ՝ զղջացած մեղաւորներին է որոնում Աստած և եթէ գտնէ, կուրախանայ և կըտանէ Իւր մօտ:

Տորկատոսը շիտթուեց:

— Բայց միթէ ամեն մեղք էլ կարելի է զղջալ: Օրինակ՝ եթէ քրիստոնեան մատնէ կամ դաւաճանէ իրեններին, կըներեն նրան այդ:

Դիոնիսիոսը դարձաւ դէպի Տորկատոսը և մեղմ ու քաղցրութեամբ ասաց.

— Ամեն տեսակ մեղքից էլ մարդ կարող է յետ կանգնել, միայն թէ տեսնէ, որ այդ մեղք է և ոչ բարութիւն: Բայց երբ բարութիւնն ընդունում է իբրև չարիք, իսկ չարութիւնը բարւոյ տեղ, այն ժամանակ էլ չի կարելի ապաշխարել, քանի որ չի տեսնում թէ յանցանքն ինչի մէջ է: Բայց քրիստոնեաներն ամեն ինչ կըներեն, սրդեակս: Այն մարդը, որ ապաշխարում է, զղջում է, շատ է տանջուած: Ի՞նչպէս չըխնայել, և ինչպէս չըներել նրան: Ամեն ինչ կըներուի: Գու՛թն ու սէրը Աստուծոյ մեծ գորութիւններն են մարդու մէջ: Յիշիր, որդեակս, Փրկչի խօսքերը խաչի վրայ. «Թող դոցա, հայր, զի ոչ գիտեն, զինչ գործեն»: Ա՜յմարիտ խօսքեր են: Եթէ մարդ իմանայ, թէ ինչպէս պէտք է տանջուի իւր յանցանքների համար, երբէք յանցանք չի գործիլ: Տորկատոսը դողողաց ամբողջ մարմնով:

Արտասուրը խեղդում էր նրան: Նա կամենում էր իսկոյն նեթ խոստովանել իւր դաւաճանութիւնը, պատմել բոլորը և գործին ուղիղ ընթացք տալ, քանի դեռ ուշ չէ, սակայն յիշում էր Փոյլբիոսի սպառնալիքը, յիշում էր, թէ որպիսի պարգևներ է խոստացել նա իրեն, եթէ հետքը գտնէր, թէ հրտեղ են թագնուած քրիստոնեաները, — և մահու սարսափը յազթեց նրա մէջ խղճի ձայնը: Նա գլուխը կախեց, ոչինչ շատաց և իրեն հանգիստ ձեռնարկելով ասաց.

— Ես լսել եմ, որ մեր եղբայրներն այս քարանձաւներում մի տեղ ժողովում են. ցոյց տուեցէք ինձ այն, որ ես գամ այնտեղ:

Սեբաստիանոսը նկատեց, որ Գիոնիսիոսի խօսքերից Տորկատոսը շփոթուեցաւ, այլայլուեցաւ, և հասկանալով, որ նա արդէն վատ բանի է ձեռնարկում, չէր ցանկանում, որ Տորկատոսն այնտեղն իմանայ, ուստի ասաց.

— Այժմ արդէն ուշ է, Տորկատոս, իսկ այդտեղը հեռու է: Մի ուրիշ անգամ կրգնանք այնտեղ:

— Գոնէ ճանապարհը ցոյց տուր:

Պանկրատիոսը մոռանալով մի փոքր առաջ Տորկատոսի մասին խօսածը, պատմեց նրա ճանապարհը:

Երբ նրանք քարանձաւներից դուրս եկան, Սեբաստիանոսը մնաց Գիոնիսիոսի հետ և պատ-

մեց նրան իւր նկատողութիւնները, թէ ինչպէս Տորկատոսը պատերի վրայ նշաններ էր անում:

Գիոնիսիոսը կրկին գնաց քարանձաւները, ջնջեց բոլոր նշանները, որոնց մասին ասել էր Սեբաստիանոսը, փլեց շատ անցքեր, որպէս զի Տորկատոսը մոլորուի և ճանապարհը չըգտնէ: Իսկ Սեբաստիանոսը նախազգուշացրեց այդ մասին քրիստոնեաներին, որպէս զի նրանք ուրիշ անցքերով անցուզարձ անեն:

VI

Փոյլբիոսը տեղեկանալով Տորկատոսից, թէ որ օր պէտք է ժողովուին քրիստոնեաները, գնաց կայսեր մօտ, որ նա իրեն զինուորներ տայ քրիստոնեաներին ձերբակալելու համար: Նշանակած օրը Փոյլբիոսը Տորկատոսի և զինուորների հետ գնաց դէպի քարանձաւները: Փոյլբիոսը մնաց մուտքի մօտ, իսկ Տորկատոսը վառեց լապտերը և զինուորների առաջն անցնելով՝ գնաց դէպի քարանձաւները: Զինուորները տհաճութեամբ հետևում էին նրան և մրթմրթում:

— Տեսնուած բան է այս — կռուել գետնի տակին, ասում էին նրանք: Ո՞վ է իմանում՝ հորբան են նրանք: Քրիստոնեաները յայտնի կախարհներ են:

Փոյլբիտսը խոստացել էր զինուորներին, ասելով՝ որ քրիստոնեաները երկչոտ են, որ նրանք երբէք չեն կուում, որ նրանք շատ ոսկի ու արծաթ ունին թաղած:

Զինուորները ներքև սուղացին:

Տորկատոսը բոլոր ժամանակ առջևից էր գնում: Սկզբում նա մէկ յիշեց բոլոր ճանապարհը, բայց յետոյ շփոթուեց. իւր նշանները ոչ մի տեղ չըկային, և նա վերջապէս բոլորովին կանգ առաւ: Նրա առաջ կանգնած էր պատը, իսկ առջևից էլ անցք չըկար:

Զինուորներն սկսեցին հայհոյել և սպառնում էին սպանել նրան: Տորկատոսը վախեցաւ, խնդրեց սպասել, ասելով՝ որ նա կըգտնէ ճանապարհը: Նա անցքերից մէկով առաջ անցաւ լապտերը ձեռքին և յանկարծ անհետացաւ, կարծես՝ գետնի տակ խրուեցաւ: Զինուորները տեսան որ անցքն ուղիղ էր և ծուռ ու մուռ տեղեր չուներ: Նրանք շատ զարմացան, թէ ո՛ւր անյայտացաւ Տորկատոսը: Եւ յիշելով որ քրիստոնեաները կախարհներ են, այնպէս վախեցան, ու զլուխները կորցրած՝ յետ վախան: Ճանապարհին, կողքի անցքերից մէկում նրանք մի լոյս տեսան, և լոյսին նայելով տեսան այնտեղ և մի կին: Նա նստարանի վրայ նստած՝ բարձր պահած ունէր լապտեր գլխի

վրայ: Զինուորները յարձակուեցան նրա վրայ և գողացին:

—Ո՛վ ես դու:

Իսկ կոյր Յիցիլիան էր, որ իմանալով թէ զինուորներ պիտի գան քարանձաւները, պարտք էր համարել լուսաւորել քրիստոնեաների ճանապարհը, բայց այնպէս պատահեց, որ զինուորները տեսան նրան:

—Ես քրիստոնեայ եմ, մեղմօրէն և հաստատապէս պատասխանեց կոյրը:

Զինուորները բռնեցին նրան և դուրս տարան քարանձաւներից: Նրանք սկսեցին պատմել Փոյլբիտսին, թէ ինչպէս կորաւ Տորկատոսը և թէ նրանք գտան միայն այս կնոջը: Փոյլբիտսը շատ բարկացաւ:

—Տորկատոսը խարել է և վախել ձեր ձեռքից, իսկ դուք յիմարներդ չըկարողացաք նրան բռնել: Բայց այ՛, այս քրիստոնեայ կինը գուցէ ճանապարհն իմանում է:

—Բայց նա կոյր է, ասացին զինուորները:

—Ա՛յ քեզ դժբաղդութիւն: Ինչի՞ նման է այս: Միայն մէկն էր բռնել, նա էլ կոյր է:

Փոյլբիտսը վերցնելով Յիցիլիային՝ իւր հետ տարաւ նրան դատաւորի մօտ:

Ճանապարհին նա շատ խօսակցեց կոյրի հետ և կարծում էր, թէ նա քրիստոնեաների մասին բան կըպատմէ:

— Այդպէս ուրեմն՝ դու չես ուրանում քրիստոնեայ լինելը, հարցրեց նա:

— Ի հարկէ ո՞չ. չի կարելի ուրանալ այն, որին ճշմարտութեամբ հաւատում ես:

— Դու, կարծեմ, երթեակնում ես Ագնէսայի տանը:

— Այո՛:

— Այնտեղ նոյնպէս քրիստոնեաներ կան:

— Գնա և հարցրու:

Փոյլբիօսը ժպտաց: Նա գիտէր, որ Ագնէսան հարուստ էր, իսկ այժմ հասկացաւ, որ նա ևս պէտք է քրիստոնեայ լինի: «Այժմ ձեռքիցս չի պրծնիլ նրա հարստութիւնը, — մտածում էր նա: — Կամ կը հարկադրեմ որ նա ինձ հետ ամուսնանայ և կամ կամբաստանեմ նրան և դրա փոխարէն ինձ կըտան նրա հարստութիւնը»:

Նա դարձաւ դէպի Յիցիլիան և նրա խաղաղ դէմքը տեսնելով՝ զարմացաւ:

— Դու գիտես՞ մենք հիմա ո՞ւր ենք գնում:

— Հաւանական է դատաւորի մօտ, որը պէտք է մարմինս տանջել տայ:

Փոյլբիօսը զարմացաւ:

— Եւ դու չես վախենում:

— Ինչո՞ւ պիտի վախենամ մահից: Զարհուրելին այն է միայն, երբ հոգին է տանջուում և կորչում, դրանից միայն պէտք է վախենալ, իսկ մահը զարհուրելի չէ:

Երբ Յիցիլիային բերին դատաւորի մօտ, նա շատ խղճաց աղբատ կոյրին: Նա մտածում էր, որ Յիցիլիան իսկոյն կը հրաժարուի քրիստոնէութիւնից և համարեա քաղցրութեամբ սկսեց նրան հարց ու փորձ անել:

— Հրաժարուէր, յիմար աղջիկ, երկրպագիր մեր աստուածներին և պատմիր ձեր քրիստոնեաների մասին: Դրա համար մենք քեզ փող կըտանք և կըբժշկենք կուրութիւնդ:

Յիցիլիան լուռ էր:

— Հը՛, ի՞նչ ես լուել: Մի՛ վախենալ, ասո՛ւ: Մենք քրիստոնեաներին չենք պատմիլ քո ասածները նրանց մասին:

— Ես քրիստոնեայ եմ և այդ կատարել անկարող եմ:

Դատաւորը բարկացաւ:

— Դու կամենում ես, որ քեզ տանջեն: Դու գիտես, որ քո կեանքն իմ ձեռքին է:

— Իմ կեանքը ոչ թէ՛ քո, այլ Աստուծոյ ձեռքին է, և դու այն ինձնից խել չես կարող: Աստուած է տուել ինձ կեանք, Աստուած էլ կարող է առնել այն: Դու իմ հոգու տէրը չես, հոգևով ես ազատ եմ: Մեր ուսուցիչն ասել է. «ամեն որ, որ ապրում է հոգևով և ճշմարտութեամբ, նա ազատ է»: Ահա ես ազատ եմ, կարող եմ մեռնել, կարող եմ և չըմեռնել: Բայց ես ընտրում եմ մահը, որպէս զի հոգիս չը կորցնեմ:

—Լաւ ես դու: Տարէք սրան, գոչեց դատաւորը:

Դահիճները տարան Յիցիլիային դէպի հրապարակ: Չուրջը հաւարուել էր ժողովուրդի մեծ բազմութիւն նայելու՝ թէ ի՞նչպէս են տանջելու քրիստոնեայ կնոջը:

Յիցիլիան դուրս եկաւ հրապարակի վրայ հեղ և խաղաղ դէմքով: Նրան մօտեցրին և կապեցին մի զարհուրելի մեքենայից, որը շրջում և կտրատում էր ոսկորները: Յիցիլիան գունատուեց: Դահիճները կապեցին նրան անիւից և սկսեցին հանդարտութեամբ շրջել նրան: Յիցիլիայի մարմինը ձգուեցաւ և նրա դէմքը ցաւի ազդեցութեան տակ այլանդակուեց:

—Աստուած իմ, թող Քո կամբը կատարուի, մեղմօրէն շնչաց նա:

—Երկրպագիր մեր աստուածներին, պատմիր քրիստոնեաների մասին և չարչարուելուց կազատուիս:

Խուռն բազմութիւնը լռեց և սպասում էր Յիցիլիայի պատասխանին:

—Ես քրիստոնեայ եմ, — հնչեց նրա ձայնը լռութեան մէջ:

Ամբոխը սոսկաց: Դատաւորը նշան արաւ դահճին և դահիճը նորից պտտացրեց անիւը: Ո՛չ մի ձայն, ո՛չ մի աղաղակ: Միայն ոսկորները սաստիկ կտրատում, ճրթճրթում էին:

Դատաւորը կրկին մօտեցաւ Յիցիլիային և հարցրեց:

—Ուրանում ես քրիստոնէութիւնդ, թէ ո՛չ: Յիցիլիան լուռ էր:

Դատաւորը կռացաւ դէպի նա և սարսափահար յետ քաշուեցաւ:

—Նա մեռած է, գոռաց նա:

Ամբոխին նորից լռութիւն տիրեց: Չատերը գլուխները կախեցին:

Այս լռութեան մէջ հնչեց Պանկրատիոսի ձայնը:

—Ո՛վ դահիճներ, նայեցէք այդ քրիստոնեայ աղջկան, նա երեսայ է դեռ, բայց իւր հաւատով ձեզ ամենքիդ յաղթեց: Մե՛ծ է նրա հաւատը և մե՛ծ է մեր Աստուածը:

Բազմութեան մէջ խսկոյն և եթ սկսեցին որոնել, թէ ո՞վ էր այդ ասողը, բայց ոչ ոքի չըզտան:

VII

Երբ Տորկուատոսը գնաց որոնելու ճանապարհը, նա չըկարողացաւ որոշել, որ առջևը մի սանդուխտ կար, որը տանում էր դէպի ներքևի քարանձաւները: Նա սայթաքելով ընկաւ ներքև և այնպէս սաստիկ դիպաւ գետնին, որ խելքը կորցրեց: Երբ սթափուեցաւ, չըկարողացաւ յիշել, թէ ի՞նչ է պատահել իրեն: Չուր-

չը խաղաղ էր և մութ: Նա առանց երկար մը-
տածելու առաջ գնաց, կարծելով՝ որ մի եւր
կըզտնէր, բայց էլ աւելի մոլորուեցաւ: Երկար
ման եկաւ նա, վերջապէս յոգնելով նստեց գե-
տին և ձեռքով գլուխը բռնեց: Ճակատը այր-
ւում էր, սիրտը տրոփում: Յիշեց իւր արածը
և այստեղ ընկնելու պատճառը, և նրա խիղճը
զարթնեց: Նա կամենում էր այդ մասին չը՝
մտածել, մոռանալ, բայց չէր կարողանում, և
նրա դաւաճանութիւնը զարհուրելի թուաց ի-
րեն: «Ինչ վատութիւն են արել ինձ քրիստոնե-
եաները», մտածում էր նա. — «ոչինչ, բացի
բարութիւնից»: Եւ յիշեց նա, թէ օրպիսի սի-
րով էին վերաբերում քրիստոնեաները դէպի
իրեն, օրպիսի խնամքով նրան խորհուրդ էին
տալիս և օգնում՝ ճշմարիտ ճանապարհից չը-
խտոտրուելու համար: «Եւ ահաւասիկ ես նրանց
եմ մատնել» մտածեց նա: «Եւ սւմ ձեռքը:—
Չարահոգի Փոյլբիոսի, որը կըմատնէ նրանց»: Յիշեց նա Դիոնիսիոսի խօսքերը, թէ՛ հիթէ
մարդիկ իմանային, թէ ի՞նչպէս պիտի տան-
ջուին իրենց մեղքերի համար, նրանք մեղք չէ-
ին գործիլ: Յետոյ յիշեց նա Դիոնիսիոսի հայ-
եացքը, այն հանդարտ ու քաղցր հայեացքը:
«Նրան էլ մատնել եմ, նրան ևս դաւաճանել
եմ: Մատնել եմ իմ բարեկամներին և ինքս
ինձ կորցրել: Բայց եթէ ես նոյն իսկ ազատ-

ւած լինէի, միթէ կարող կըլինէի խաղաղ ապ-
րել, երբ ես այդ մարդկանց կորստեան պատ-
ճառ դարձայ: Ո՛չ, խիղճս ինձ հանդիստ չէր
թողնիլ: Ո՛հ, հէնց այժմ օրքան ծանր է ինձ
համար, շատ ծանր: Աւելի լաւ է շուտով մեռ-
նելը: Եւ ձեռքը դնելով կրծքին՝ ընկաւ գետին
և սկսեց հեկեկալով լալ:

Երկար նա պառկած լալիս էր. ապա լռեց,
բայց երբեմնակի հառաչանքներ էր արձակում:
Այդ ժամանակ նա կարծես մի ձայն լսեց: Վեր
բարձրացաւ գետնից՝ ականջ դնելու: Լսում էր
որ մէկը կարդում է, այնպէս որ խօսքերն իսկ
կարելի էր պարզ սրոշել: «Երևում է քրիստոնե-
եաներն են հաւարուել ու կարդում են»: Նա
սկսեց ականջ դնել:

«Երկու ճանապարհ կայ, կարդում էր ձայ-
նը. — ճանապարհ կեանքի և ճանապարհ մահու»:

«Այս է կեանքի ճանապարհը» — Սիրիւր քեզ
ստեղծող տէր Աստուծն և ապա քո մերձատո-
րին, որպէս քո անձը, և ինչ որ քեզ համար
չես ցանկանում, նոյնը մի ցանկանալ քո ըն-
կերի համար: Կեանքի մասին վարդապետու-
թիւնը Քրիստոս տուաւ: Սիրեցէք ձեր թշնա-
միներին, օրհնեցէք ձեզ անիծողներին և բարի
արէք ձեզ ատողներին, որովհետեւ այն բարու-
թիւն չէ, եթէ մարդիկ սիրեն միմիայն իրենց
բարեկամներին. այդպէս անում են և հեթա-

նոսները, ուստի և նրանք թշնամիներ ունին: Դուք ամենքդ մի հօր որդիք էք, ուստի և հաւասար էք: Մի կալ երբէք հակառակ չարին: Որպէս զի ձեզ շարութիւն չանեն, դուք նրանց չըհատուցանէք շարութեամբ, որ ձեր մէջն ևս շարութիւն չըլինի: Եւ եթէ մէկը խփէ քո աջ ծնոտին, շուռ տուր և միւսը, և եթէ մէկը կամենայ դատուիլ քեզ հետ և խել քեզանից չապիկդ, տուր նրան բաճկոնդ: Իւրաքանչիւր խնդրողին՝ տուր և փոխարէնը մի պահանջիր յետ, որովհետև քո հօր կամքն է, որ իւրաքանչիւրն ունենայ այն, ինչ ինքն է տուել: Երանի՛ նրան, ով տալիս է համաձայն պատուիրանի. արդարը նա է: Չայ նրան՝ ով առնում է՝ կարօտութիւն չունենալով, նա իրաւացի չէ և իւր առածի համար պէտք է հաշիւ տայ: Մի բարկանար քո եղբօր վրայ մինչև անգամ այն ժամանակ, երբ քեզ թուում է, թէ նա մեղաւոր է: Առաջին մեղաւորը դու ես, որովհետև ինքդ ես նրան այդ աստիճանի հասցրել: Ամենևին մի երդնուր, որովհետև ոչ մի բանում կանխապէս երաշխաւոր լինել չես կարող: Դուք չզիտէք, թէ ինչ կըպատահի ձեզ վաղը, որովհետև ձեր ամբողջ կեանքն Աստուծոյ կամբիցն է կախուած: Մի շնար և մի արձակիր կնոջդ, — նրանից մեծամեծ շարիքներ են ծնւում աշխարհում: Ապրեցէք իւրաքանչիւրդ ձեր կնոջ հետ: Հեզ եղիր,

որովհետև հեզերը պէտք է ժառանգեն երկիրը: Եղիր ազբատ, որովհետև երանի՛ է հոգւով ազբատաց: Սիրիւ նրան, ով ուսուցանում է քեզ Աստուծոյ խօսքը և յարգիւ նրա խօսքերը, որպէս Տիրոջը, որովհետև Աստուած այնտեղ է, որտեղից տեղեկութիւն ստացար նրա մասին: Միշտ որոնիր սուրբ մարդկանց և յարաբերութիւն ունեցիր նրանց հետ, որպէս զի նրանց խօսքերի մէջ դու խաղաղութիւն գտնես: Կեղծաւորութիւն չանէք և չասէք՝ կարելի է այսպէս, բայց կարելի է և այնպէս: Ո՛չ մի բան ձեր սեպհականը չըհամարէք և այն, ինչ որ աշխատել էք ձեր ձեռքով, տուեցէք որպէս փրկանք ձեր մեղքերի համար: Մի մոռանար Աստուծոյ պատւիրանները, պինդ պահեցէք նրանց, ո՛չ աւելացրէք և ո՛չ պակասեցրէք: Հաւատացեալների մօտ ապաշխարեցէք ձեր մեղքերը և չըմտածէք աղօթելու, մինչդեռ շարութիւնը ձեր սրտումն է:

«Իսկ մահու ճանապարհն այս է՝ — նախ և առաջ նա աղէտարեր է և լի ամենայն անպիտանութիւններով՝ մարդասպանութեամբ, պղղծութեամբ, գողութեամբ, պիղծ ցանկութեամբ, կռապաշտութեամբ, յափշտակութեամբ, խաբէութեամբ, երեսպաշտութեամբ, կեղծաւորութեամբ, խորամանկութեամբ, հպարտութեամբ, շարութեամբ, զազրախօսութեամբ և նախանձով: Այստեղ են՝ բարութեան հալածիչները,

աստուածային արդարութեան ատողները, ստու-
 թիւն սիրողները. նրանք՝ որոնք տքնում են ոչ
 բարութեան, այլ շարութեան համար, որոնք
 չըզիտեն հեղութիւն և համբերութիւն, դատար-
 կաբանութիւն սիրողները, նրանք՝ որոնք չեն
 խնայում աղբատներին և աշխատողներին,—
 թշուառների աշխատանքով յարգեցողները, մար-
 դասպանները, փոքրիկներին դայթակցեցնողնե-
 րը, հարուստներին սփոփողները և տնանկների-
 անգութ դատաւորները, Աստուծոյ պատկեր եզ-
 ծողները, Աստուած չըճանաչողները: Որ ստեղ-
 ծողն է ամենքի, և վերջապէս՝ ամենատեսակ
 սեղաւորները: Զգոյշ կացէք, որդեակը իմ, այդ-
 պիտի մարդկանցից»:

Չայնը լռեց:

«Այդ ես եմ մահուան ճանապարհի վրայ»
 —կամեցաւ աղաղակել Տորկատոսը, բայց ձայն
 չըկար, կոկորդը բռնուել էր, կարծես մէկը
 ճնշում լինէր»:

Յանկարծ նա մի լոյս տեսաւ, սկզբում
 հեռու, ապա աւելի և աւելի մօտիկ: Ահա և
 մարդիկ երևացին. մի բան են բերում: Ահա
 կանգնեցին. սկսեցին մի որ և է բանով զբաղ-
 ւիլ: Տորկատոսը վեր կացաւ և գնաց նրանց
 մօտ: Մարդիկ կանգնած էին խմբով, բայց նրանց
 մէջ տեղը, յատակի վրայ դրած էր մի դեռա-
 հաս աղջկայ մարմին: Գիտնխտոսն սկսեց նրա

գերեզմանը հատել: Ամենքը կանգնած էին լուռ,
 շատերը լալիս էին:

Տորկատոսը հարցրեց.

—Այդ ում են թաղում:

—Ցիցիլիային, նրան բռնել էին զինու-
 որները քարանձաւներում և տանջել էին դատա-
 րաններում, պատասխանեցին քրիստոնեաները:

—Տէր Աստուած, այս ի՞նչ գործեցի ես:
 Գրա մարդասպանը ես եմ, ես, ես դաւաճանս:
 Զինուորներին ես եմ բերել այստեղ, գոչեց
 Տորկատոսն անսովոր ձայնով:

Ամբոխը սոսկաց: Միայն Գիտնխտոսը թիա-
 կը ձեռքին՝ նայում էր նրան:

Տորկատոսը ծունկ չորեց.

—Ներեցէք ինձ եղբարք իմ: Ես մեծ յան-
 ցանք եմ գործել, արժանի չեմ ձեզ հետ լի-
 նելու. արժանի չեմ և ձեզ եղբայր կոչուելու:

Եւ նա կրկին թաւալուեց գետինն, լալիս
 էր, ապաշխարում էր, թէ իւր հողին անվերջ
 կորած է:

Գիտնխտոսը մօտեցաւ նրան և ասաց.

—Կանգնիր, որդեակս, խղճում եմ քեզ:
 Տեսնում եմ, որ դու զոջացիր և հասկացար քո
 յանցանքը: Եթէ ես քեզ ներեմ որ խղճում եմ,
 նա՞ մեր հայրն ևս կըներէ քեզ: Հիմա դու դար-
 ձար դէպի Աստուծոյ ճանապարհը և տեսար
 նրան. մի դառնար այսուհետև նրանից, այլ

գնա՞ դէպի Աստուած: Դուք եւ ներեցէք սրան, եղբարք, և ձեր սիրով օգնեցէք և խղճացէք սրան:

— Աստուած ներէ քեզ. ներիր և դու մեզ, ասացին քրիստոնեաները:

Նրանք մօտեցան նրան ուրախանալով, որ մոլորեալ ոչխարը դարձել է դէպի իւր հօտը:

Եւ այդ օրուանից Տորկատոսը բնակուեցաւ Դիոնիսիոսի հետ քարանձաւներում և օգնում էր նրան գերեզմաններ հատելիս:

VIII

Ազգային տօնախմբութիւնից մի քանի օր առաջ, երբ ամբոխը հաւաքուում էր քրիստոնեաներին վայրենի դազանների հետ մրցել տալու, հռովմայեցոց կայսրը Փոյլբիոսին զինուորներ տալով՝ ուղարկեց այնտեղ, ուր բանում էին քրիստոնեաները: Փոյլբիոսը գտաւ նրանց վերատեսչին և նրա հետ գնաց տօնի համար քրիստոնեաներ ընտրելու:

Բաւականաչափ հաւաքուած քրիստոնեաների թւում Փոյլբիոսը նկատեց մի մարդու, որը բանտարկեալի հագուստ չունէր և որը կանգնած էր թիկունքը դէպ իրեն դարձրած:

Փոյլբիոսը ցոյց տալով նրան՝ հարցրեց վերատեսչից.

— Ո՞վ է այս մարդը:

— Չեմ ճանաչում: Նա յաճախ է գալիս այստեղ քրիստոնեաների մօտ, խօսակցում է նրանց հետ և հաց է բերում նրանց համար:

Փոյլբիոսը մօտեցաւ այդ մարդուն. վերջինս դարձաւ դէպի նա:

Դա Պանկրատիոսն էր: Փոյլբիոսը գիտէր նրա մասին, որ նա ևս քրիստոնեայ է. ուստի ուրախանալով՝ հրամայեց նրան ևս տանել:

Ընտրած բոլոր քրիստոնեաներին երկար շղթաներով շղթայելով՝ քչեցին դէպի բանտը:

Այդ բանտը մի ահագին հասարակ խորխորատ էր, փորուած գետնի տակ. լուսամուտներ չունէր. քարից շինուած հաստ պատերին ամրացրած էին երկաթեայ մեծ օղակներ, որոնցից կապուտում էին քրիստոնեաներին: Նրանք պէտք է նստէին և քնէին այդ խոնաւ, սառն ու կեղտերից արտաշնչուած գարշահոտութեամբ ապականուած գետնի վրայ:

Նրանց կերակուր համարեա չէին տալիս: Այնպիսի գարշահոտութիւն էր տիրում այնտեղ, որ քրիստոնեաներից շատերը չըկարողանալով տանել այն, մեռնում էին դեռ դատարան չը կանչուած:

Այդ միևնոյն բանտը տարին և Պանկրատիոսին:

Հետևեալ օրն ամենքին տարին դատարան

և հարց ու փորձ արին առանձին: Չատերի հետ դատաւորը խօսում էր, աշխատելով համոզել նրանց, որ նրանց հաւատն ուղիղ չէ: Չատերին էլ ուղղակի հարցնում էր՝ «Գու քրիստոնեանց հա՞»—և երբ «այո» էր պատասխանում, ուղղակի մահուան էր դատապարտում:

Երբ հերթը հասաւ Պանկրատիոսին, դատաւորն ասաց նրան.

—Լսիր, մենք վաղուց է հետևում ենք քեզ և գիտենք, որ դու քրիստոնեայ ես: Արդ՝ ուրացիր Քրիստոսին և պատմիր քո ծանօթ քրիստոնեաների մասին, և մենք կընդհանր քեզ այլապէս չես պրծնիլ մահից. ես ճանաչում եմ մօրդ, հեշտ չի լինիլ նրա համար, երբ լսէ քո հանգամանքդ. չէ որ դու նրա միամօր որդին ես. խնայիր նրան:

Պանկրատիոսի երեսի գոյնը թռաւ: Մի վայրկեան նա տատանուեց. դէպի մայրն ունեցած սէրը քիչ մնաց, որ յաղթահարէր իրեն: Նա պահ մի լռեց և ապա գլուխը բարձրացնելով՝ ասաց.

—Իմ մայրը մի որդի չունի: Քոյոր մարդիկ նրա որդիքն ու եղբայրներն են: Եթէ ես չըլինիմ էլ, նա դարձեալ հազարաւորը կունենայ: Բայց եթէ ես ուրանամ իմ Քրիստոսին, մատնեմ իմ եղբայրներին, այն ժամանակ ես չեմ կարող իմ երկնաւոր Հօր որդի համարուիլ:

և մենք միայն այն ժամանակ կենդանի կըլինինք, երբ նրա որդին համարուինք:

—Այնուամենայնիւ ես քեզ խղճում եմ: Ախր ինչ մի դժուար բան է, որ ասես՝ ես ուրանում եմ Քրիստոսին:

—Ինքդ էլ չըզիտես, ինչ ես պահանջում: Ես չեմ կարող ասել՝ ես քրիստոնեայ չեմ: Եթէ ասեմ էլ այդ խօսքերը, ես ստած կըլինիմ, այդ ինքդ էլ գիտես: Արդեօք այդ է քո պահանջը: 2^է որ քեզ հարկաւոր է, որ ես հոգւով փոխւելիմ, որ սկսեմ ապրել ձեզ նման, ընդունեմ ձեր աստուածներին, յաճախեմ ձեր տաճարները, ունենամ ստրուկներ, ծեծեմ նրանց, որսամ և տանջեմ քրիստոնեաներին: Իսկ ես այդ անել չեմ կարող:

Դատաւորը մտածելուց յետոյ՝ ասաց.

—Ամենքը, ովքեր որ չեն ընդունում մեր կարգերը, մեր թշնամիներն են, և մեզ հրամայուած է տանջել և սպանել նրանց:

—Մենք չենք ձեր թշնամիները. այդ դուք էք այդպէս համարում մեզ. մենք ձեզ ոչինչ չարութիւն չենք անում: Մեր հաւատի գերազանցութիւնը հէնց նրանումն է, որ մենք բարութիւն ենք անում անխտիր բոլոր մարդկանց, ովքեր և լինին նրանք:

Դատաւորը բարկացաւ:

—Եթէ դուք չարութիւն չըլինիք արած,

չէին հրամայիլ ձեզ սպանել. իսկ ամենքը ձեզ վնասակար մարդիկ են համարում: Ուրանում ես, թէ ո՛չ:

— Ո՛չ:

— Տարէք նրան: յետ բանտը, ասաց դատաւորը:

Քրիստոնեաների շարչարանաց նախընթաց օրը բանտում ընթրիք էին սարքել: Մինչև անգամ դահիճները մեղմութեամբ էին վարուում նրանց հետ և մի փոքր էլ ազատութիւն էին տուել: Քրիստոնեաները կարող էին ընդունել իրենց ծնողներին և ծանօթներին, որոնք գալիս էին տեղեկութիւն իմանալու և վերջին հրածեղտը տալու նրանց: Այդ օրը Սերաստիանոսն էլ եկել էր բանտը Պանկրատիոսի մօտ:

— Ի՞նչպէս է մայրս, Սերաստիանոս, տեսել ես նրան:

Պանկրատիոսը կամեցաւ մի քանի խօսք էլ ասել, բայց արտասուքները խեղդեցին նրա կոկորդը: Սերաստիանոսը լուռ գրկեց նրան:

Պանկրատիոսը մի փոքր լռելուց յետոյ՝ ասաց.

— Ա՛խ, իմ սիրելի ծնող: Երբ այլ ես չեմ լինիլ, Սերաստիանոս, կասես նրան, որ ես մեռայ խաղաղութեամբ. կասես, որ ես չեմ գրգռում և որ ես բաղդաւոր եմ:

Պանկրատիոսի դէմքն աւելի պայծառա-

ցաւ և հանգստացաւ, միայն յորդ արտասուքները հոսում էին նրա աչքերից:

Յոլոր քրիստոնեաներն էլ այդպէս անխրոով չէին սպասում մահուան: Կային և այնպիսիները, որոնք երկիւղից զայթակողութեամբ հարցնում էին իրար. «Ինչ հարկ կայ այդպէս ամուր կանգնել և ասել, թէ մենք քրիստոնեայ ենք: Ի՞նչ կըլինի, եթէ ուրանանք Քրիստոսին, չէ՞ որ դա միայն խօսքերով ենք ասում. այդպիսի ուրացութիւնից ի՞նչ վնաս կարող է լինել: Մենք եթէ կենդանի մնանք, կարող ենք շատ օգուտ տալ, իսկ ի՞նչ շահ կայ, եթէ մեզ տանջեն:»

Այդպիսիների թիւը քիչ էր. նրանք հաւաքուել էին բանտի մի անկիւնը և այդ մասին խօսում էին իրար հետ:

Նրանց մօտեցաւ մի ծերուկ և նայելով նրանց՝ ասաց.

Ինչի՞ մասին էք խօսում, եղբարք:

Նրանք պատմեցին նրան իրենց մտադրութիւնը:

Ծերուկը գլուխը շարժելով ասաց.

— Լա՛ւ բան չէք հնարել դուք: Մի՛թէ այս տեղ գործը խօսքերի մէջն է: Եւ մի՛թէ խօսքերի համար են մեզ տանջում: Յիշեցէք Քրիստոսի այս առթիւ մեզ ասածները: Նա ասել է՝ «Մի՛ դարմանար եթէ աշխարհն ատէ ձեզ. նա

ձեզ չի ատում, այլ իմ վարդապետութիւնը: Եթէ դուք համակերպուէիք աշխարհի հետ, աշխարհն էլ կըսիրէր ձեզ: Ես ձեզ իմ վարդապետութեամբս կտրեցի աշխարհից և դրա համար ձեզ պիտի հալածեն: Եթէ ինձ հալածեցին, ապա և ձեզ՝ իմ աշակերտներիս էլ կըհալածեն, որովհետև չեն ճանաչում ճշմարիտ Աստծուն:

«Յիշեցէք, եզրարք, թէ Քրիստոս ինչպէս էր բացատրում Աստուծոյ ճշմարտութիւնը և սովորեցնում նրա համեմատ ապրել, չըզլջանելով ո՛չ մի բանի: Հրաժարական ողջոյնը տալիս՝ նա ասում էր աշակերտներին՝ «Ես ընտրեցի ձեզ, դուք էք իմ աշակերտները: Եթէ պահէք իմ պատուիրանները, իմ սիրոյ մէջ կըլինիք դուք: Այս է իմ պատուիրանս՝ սիրեցէք միմեանց, ինչպէս Ես ձեզ եմ սիրել: Գուր էք իմ բարեկամները, եթէ կատարէք ինչ որ Ես ասել եմ ձեզ: Երանի է ձեզ, եթէ կըհալածեն ձեզ իմ անունով. ձեր վարձքը մեծ կըլինի Աստուծոյ առաջ»:

Ծերուկը լռեց: Քրիստոնեաների դէմքերը պայծառացան, ցրուեցան նրանք իրենց տեղերը և խաղաղ կերպով սպասում էին մահուան:

IX

Վաղ առաւօտուանից ժողովուրդն սկսեց խմբուել տօնախմբութեան տեղը: Գնում էին

մի մարդիկ, և՛ կանայք, և՛ աղքատներ, և՛ հարուստներ, աղքատները ոտքով, իսկ հարուստները պատգարակներով, որոնց կրում էին ըստրուկները: Հրապարակը շրջապատուած էր ահագին քարեայ պարսպով, իսկ շուրջը, ուղղակի պատերի տակ, մէկը միւսից բարձր, շարուած էին նստարաններ ժողովրդի համար: Հրապարակը տեղաւորում էր հարիւր հազար մարդ և այդպիսի տօներին ամեն անգամ էլ նստարաններից ո՛չ մինը դատարկ չէր լինում: Հրապարակ բերում էին քրիստոնեաներին, ուր վանդակներից արձակում էին նրանց վրայ վայրենի գաղաններ, որոնց մինչ այդ մի քանի օր դիտմամբ չէին կերակրում, որպէս զի նրանք աւելի ազահարար յարձակուէին մարդկանց վրայ:

Այդ տօներին գալիս էր և կայսրն իր պալատականների հետ և նստում էր իւր համար յատկապէս պատրաստած տեղը: Այս ոչ առաջին և ոչ վերջին դէպքն էր, որ այդպիսի արիւնալից տեսարաններ էր պատրաստուում ժողովրդի համար: Բայց այդ օրը, ներկայացման հէնց սկզբում, տեղի ունեցաւ և մի այլ դէպք: Կայսեր շրջապատող պալատականների թւում գտնուում էր և Սերաստիանոսը: Կայսրը նստած էր իւր տեղը: Բանտի դռները, որ տանում էր ուղղակի դէպի շրջանաձև հրապարակը, բացւեցան, և այնտեղից դուրս բերին քրիստոնեա-

ներին, որոնք նշանակուած էին գաղաններէ առաջ ձգուելու համար: Նրանք մօտ 20 հոգի էին. կային թէ ծերեր, թէ մանուկներ, թէ կանայք և թէ գեռահաս առոյգ երիտասարդներ: Նրանք մի փոքրիկ խմբակ կազմեցին, կարծես՝ կամենում էին միմեանց պաշտպանել. ամենից մեծը, մի այլոր ծերունի, բարձրաձայն աղօթք էր կարդում և բոլոր շարշարեալներն ազահուծեամբ ականջ էին դնում նրա սուրբ խօսքերին:

Ամենքն սպասում էին կայսեր նշանին, որպէս զի գաղանները բաց թողնէին: Հէնց այդ բողբէին Սեբաստիանոսն արագուծեամբ մօտեցաւ կայսեր և նրա ոտքերն ընկնելով ասաց.

— Ողորմիր այդ քրիստոնեաներին, խնայիր դրանց: Նայիր նրանց, տես, արդեօք նրանք քեզ որևէ շարիք արել են և կարո՞ղ են արդեօք որևէ շարութիւն անել քեզ:

Կայսեր մօտեցաւ Փոյլբիոսը և բարձրաձայն ասաց.

— Թագաւոր, դու ամեն տեղ թշնամիներ ունիս: Գիտնն արդեօք, որ քո սիրելի Սեբաստիանոսը քրիստոնեայ է: Ահա քեզ ապացոյց — և տուեց նրան թղթերը:

Կայսրը խոժոռեց դէմքը և թղթերը կարդալով՝ կատաղութիւնից և շարութիւնից սկսեց կարմրիլ:

— Ի՜նչպէս... զոռաց նա, իմ պալատումն էլ քրիստոնեաներ... Ո՛ւմ կարելի է հաւատալ այժմ. շուրջս ամեն ուրեք թշնամիներ: Գոհութիւն մեր աստուածներին, որ նրանք ազատում են ինձ մահից: Գրա համար բոլոր քրիստոնեաներին նրանց զոհ կըմատուցանեմ, կոչընչացնեմ ամենքին:

Սեբաստիանոսը կանգնելով ասաց.

— Հանգիստ եղիր, թագաւոր, քրիստոնեաները քեզ թշնամի չեն: Ոչ թէ քո աստուածներն են ազատել քեզ, այլ քրիստոնեաների հաւատը: Եթէ մեր հաւատը թոյլ տար մեզ շարութիւն անել, ես վաղուց սպանած կըլինէի քեզ: Բայց իմ հաւատը և խիղճս չեն թոյլատրում անել այդ շարութիւնը: Ես կատարել եմ այն ամենը, ինչ որ դու հրամայել ես, երբ տեսել եմ, որ այդ մարդկանց համար շարութիւն չէ, և ես ոչ մի բանում քո առաջ մեղաւոր չեմ: Բայց մեղանից և քեզնից էլ բարձր Աստուած կայ, և նրա առաջ մենք երկուսս էլ մեղաւոր ենք: Յիշիր, թէ քո հրամանով քանի՛ քանի մարդիկ են տանջուել, մարդիկ, որոնք քեզ ոչինչ չար չեն արել: Սթափուիր, քանի ժամանակ ունիս, ապաշխարիր, և դու կըստանաս բաղդաւորութիւն և խղճի հանգստութիւն, որոնք այժմ պակասում են քեզ:

Սեբաստիանոսն արդէն վերջացրել էր խօս-

քը, բայց կայսրը դեռ չուռ կանդնած էր: Ապա նրա բարկութիւնը յետ եկաւ, և նա դառնալով դէպի զինուորները՝ գոչեց, ցոյց տալով Սեբաստիանոսի վրայ:

— Տարէք նրան և փակեցէք բանտում: Վազը կըքննեմ:

Սեբաստիանոսին բռնեցին և տարան:

Անհամբեր ամբոխը կատաղաբար գոչեց:

— Թո՛ղ կորչին գաւաճանները: Գազաններին տալ նրանց:

Կայսրը իւր թաշկինակով նշան տուեց:

Իսկոյն բացուեցան այլ դռներ, սրտեղից դուրս ցատկեցին կատաղի գազաններ, վագրեր և առիւծներ, — և տեղի ունեցաւ արիւնալի տեսարանը:

Քրիստոնեաներից շատերն արդէն իրենց տանջանքը կրել էին գազանների ճանկերում, երբ հերթը հասաւ Պանկրատիոսին:

Կալանաւորուած քրիստոնեաներից ամենից դեռահասը նա էր և նրան դիտմամբ պահել էին վերջը: Հեթանոս քուրմերը կարծում էին, որ Պանկրատիոսը կուրանայ Քրիստոսին և ներողութիւն կըխնդրէ ժողովրդից: Այն ժամանակ ժողովրդի ուրախութեան չափ չէր լինիլ, տեսնելով ուրացող քրիստոնեայ:

Պանկրատիոսը եկաւ բանտից շրջապատւած զինուորներով: Նրան սպիտակ էին հագ-

ցըրել: Խաղաղ էր նրա դէմքը, աչքերը փայլում էին մեղմ փայլով:

Փողոցում ամբոխը զարմանում էր նրա խաղաղ դէմքի, գեղեցկութեան և նրա մատաղ հասակի վրայ:

Երբ Պանկրատիոսն անցնում էր Իւպիտէր աստուծոյ զլխաւոր տաճարի մօտով՝ ժողովուրդը գոչեց:

— Ծո՛նկ խոնարհիր, երկրպագի՛ր Իւպիտէրին, երկրպագի՛ր մեր աստուածներին:

— Իմ եղբայրներ, պատասխանեց Պանկրատիոսը, Քրիստոս ասել է մեզ, թէ կըգայ ժամանակ, երբ ուրիշ որ և է առանձին տեղ չը պիտի երկրպագեն Աստուծուն: Կըգայ այդ ժամանակը, և արդէն իսկ հասել է, երբ մարդիկ հոգևով և գործով կըժառայեն Հօր-Աստծուն: Միայն այդպիսիները կըկոչուին երկնաւոր Հօր զաւակներ: Կըգայ ժամանակ, երբ մարդիկ կը տեսնեն և կըհասկանան ճշմարիտ Աստծուն, և այն ժամանակ կուռքերի տաճարները պէտք է կործանուին:

— Նա հայհոյում է աստուածներին, գոռում էր ամբոխը:

Միւսները հարցնում էին՝ ո՞ր Հօր Աստուծոյ մասին է խօսում նա:

Պանկրատիոսին առաջ տարին:

Ուղիղ հրապարակի մուտքի մօտ կանգնած

էր մի բարձրահասակ կին, խաղաղ ու դժգոյն
գէճքով, որպէս մեռեալ:

Պանկրատիոսը կանգ առաւ և ընկաւ նրա
ոտքերը:

— Մայրիկ, ներիր ինձ, ասաց նա:

— Քաղցրիկ որդեակ իմ:— Դո՛ւ ևս ընկել
իմ ոտքերը:— Դո՛ւ ինձ ներիր, և թո՛ղ Աստու-
ծոյ կամբը կատարուի քո վրայ— հանդարտու-
թեամբ ասաց Լիւցինիան:

Պանկրատիոսը կանգնեց: Նրա առաջ գրու-
ները բացին և նա մտաւ շրջապատի մէջ:

Ծառաները հրապարակի վրայ կանգնեցին
վանդակներ և գոռները բաց արին: Յովազը
դուրս ցատկեց վանդակից և ուրախանալով որ
իրեն ազատ թողին, կատուի փոքրիկ ձագի
նման սկսեց թաւալուիլ խաղաղ գետնի վրայ:
Ապա նա գլուխը բարձրացնելով տեսաւ Պանկ-
րատիոսին: Նա կանգնած էր՝ ձեռքերը կուրծ-
քի վրայ խաչած և չէր նայում գաղանին: Յո-
վազը պտոյաններ արաւ նրա շորս կողմը, նըս-
տեց, համարեա թէ պառկեց գետնին, և չընե-
ռացնելով նրանից իւր զարհուրելի աչքերը՝
հանդարտութեամբ սողում էր գէպի նա աւա-
զի վրայով: Ապա նա աւելի բարձրացաւ և յան-
կարծ կայծակի արագութեամբ թռչելով՝ կպաւ
Պանկրատիոսի կրծքին:

Ամբոխը դողաց և սարսռեց: Պանկրատիո-

սը ցնցուեց, տատանուեց, և արիւնն սկսեց
դուրս հոսալ նրա կոկորդից:

— Ներեցէք ինձ... մեռնում եմ ասաց և
ընկաւ գետնի վրայ:

X

Այդ հանդիսին ներկայ էր և Փաբիօլան:
Նա ճանաչում էր այժմ համարեա բոլոր քրիս-
տոնեաներին, որոնք այդտեղ տանջում էին:
Նա նրանց լաւ մարդիկ էր համարում. եկել էր
վերջին անգամ նայելու և հրաժեշտ տալու
նրանց: Մինչդեռ քրիստոնեաներին գաղանա-
կուր էին անում, Փաբիօլան ամբողջ ժամանակ
նստած էր լուռ՝ չըթունքները սեղմած և մե-
ռելի գոյն էր ստացել:

Սկզբներում նա ևս յաճախակի ներկայ էր
լինում այդ հանդէսներին և ուրիշների հետ
միասին ուրախանում էր, տեսնելով թէ ինչ-
պէս են մեռնում քրիստոնեաները: Առաջ նա
քրիստոնեաներին համարում էր սրպէս չարա-
գործներ, և նրանց սպանելը բարի գործ էր
համարում: Այժմ նա ճանաչում էր քրիստոնեա-
ներին, ճանաչում էր, որ նրանք լաւ մարդիկ
են: Նա տեսնում էր նրանց՝ խաղաղ տանջան-
քը և ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ,
թէ ինչո՞ւ էին տանջում նրանց: Նա զգում էր,

որ մարդիկ այդ բանում մի ստոր և զգուցելի յանցանք են գործում: Նա կամենում էր զոռալ-կանգնեցնել նրանց, որ այդ խաղը բոլորովին զուարճալի չէ, այլ շատ զարհուրելի գործ, բայց նա իրեն անզօր էր համարում այդ բանին: Պանկրատիոսի մահուանից յետոյ՝ նա վերկացաւ տեղից և հարբածի պէս տատանուելով գնաց տուն: Տանը նա թեթևութիւն չըզգաց: Նա փակուեցաւ միայնակ սենեակում և ոչ որի չէր թողնում իւր մօտ մտնել, բացի Սիրայից: Պանկրատիոսի ուրուականը նրա աչքից չէր հեռանում, նա տեսնում էր, թէ ինչպէս կանգնած էր նա խաչած ձեռքերով, տեսնում էր և նրա խաղաղ ու պայծառ աչքերը, նրա զարհուրելի մահը: «Ինչո՞ւ են մարդիկ այդքան չարագործութիւն անում», հարցնում էր ինքն իրեն: Այդ ո՞ւմ է հարկաւոր: Միթէ դրանով մարդիկ աւելի բազումը կըլինին: Բայց Փաբիօլային փիճակուած էր ապագայում ևս ականատես լինել իւր սիրելիներից շատերի կորստեան, որոնց թւումն էր և Սեբաստիանոսը:

Հետեւեալ օրը կայսրը հրամայեց իւր մօտ հրաւիրել իւր նախկին սիրելուն՝ Սեբաստիանոսին և կարծում էր, որ սկզբում քաղցրութեամբ, ապա սպառնալիքներով կարող կըլինէր հարկագրել նրան ուրանալ քրիստոնէութիւնը: Նա միանգամայն յոյս ունէր, որ Սե-

բաստիանոսը խելքի կըզայ: Իսկ երբ համուկեցաւ, որ իր ջանքերն ապարդիւն են, նրա մէջ բորբոքուեց կատաղի բարկութիւնը, և նա հրամայեց իւր մերձաւոր դատաւորներին՝ Սեբաստիանոսի համար մտածել մի առանձին չարատանջ մահ:

— Իմ սիրելին իւր ծառայութեան համար արժանի է մի առանձին ողորմութեան, թո՛ղ նրա մահն էլ բարձր լինի միւսների մահից, բացականչեց կայսրը շարժալիտ ծաղրով:

Հասաւ Սեբաստիանոսին պատժելու օրը:

Նրան դուրս բերին հրապարակ, մերկացրին նրան և կապեցին սիւնից: Նրա մօտ մի քանի զինուորներ դրին, որոնք պէտք է հերթով նետեր արձակէին Սեբաստիանոսի վրայ: Մահը գանդաղ կերպով էր վրայ հասնում, ուստի և նրա տանջանքն աւելի զարհուրելի և վըշտաղին էր: Չնայելով դրան՝ Սեբաստիանոսը դեռ երկար պահում էր իւր լիակատար յիշողութիւնը: Ժպիտը չէր հեռանում նրա շրթունքներից, որոնք ժամանակ առ ժամանակ մըմնջում էին Քրիստոսի խօսքերը, երբ նա աղօթում էր իրեն շարշարանքների ներման համար: Բայց փոքր առ փոքր նրա մարմինն անզօրացաւ և ապա հառաչելով վայր ընկաւ և անչընչացած՝ կախուեցաւ թոկերից: Նրա արիւնաթաթախ մարմինն զինուորները դեռ երկար

ժամանակ նետահարում էին և վերջապէս, երբ մարմինը ծակծկուեցաւ նետերի շարքերով՝ նետեցին նրան այնտեղ՝ թռչուններին և շներին կուր լինելու համար:

Գիշերը հրապարակ կկան ծածկոցների մէջ փաթաթուած երկու կին, որոնք խնամքով փաթաթեցին նահատակի մարմինը՝ տարան դէպի քրիստոնեաների հանգստարանի ուղղութեամբ: Գրանք Փաբիոլան և Սիրան էին:

Բոլոր այդ արիւնալի տեսարանները սաստիկ ազդեցին Փաբիոլայի վրայ:

Նրա համար ծանր էր տանել այդ ամենը: Բայց ընդ նմին նրա մէջ աւելի և աւելի էր սաստկանում դէպի Քրիստոս ձգտելու սէրը, որի համար սիրով մեռել են լաւագոյն մարդիկ: Նրա բոլոր նախկին կեանքը զգուցիւ դարձաւ իրեն: Նա ամբողջ օրերով նստում էր միայնակ, ոչ մի տեղ չէր գնում, ոչինչ չէր խօսում: Միայն մի միտք, մի մտածողութիւն ունէր. «Ինչո՞ւ են տանջում բարի մարդկանց, երբ նրանք ոչ որի շարիք չեն արել: Նրա համար արդեօք, որ քրիստոնեաները գործով ցոյց էին տալիս, թէ ինչպէս պէտք է ապրել. և դրանով յուզում էին հեթանոսների խիղճը: Այո, այդ այդպէս է: Բայց ո՞վ կըտայ ինձ այնքան ոյժ, որ ես էլ այդպէս ապրեմ: Ինչպէս առաջ էի ապրում, այդպէս ապրել այժմ չեմ կարող,

բայց և ապրել այնպէս, ինչպէս քրիստոնեաները՝ ոյժ չունիմ: Ի՞նչ անեմ ուրեմն»:

Մի անգամ, երբ Փաբիոլան մտահոգ նըստած էր, յիշեց Ագնէսային: Նա Ագնէսային շատ էր սիրում. գիտէր՝ որ նա բարի սիրտ ունի: «Արի գնամ նրա մօտ, թերևս նա օգնէ ինձ»: Չէնց որ պատրաստում էր դուրս գալու, սենեակ մտաւ Սիրան և տուեց նրան Ագնէսայի տոմսակը: Ագնէսան գրում էր, որ իրեն ձերբակալել են և թէ այժմ նա նստած է բանտում: Փաբիոլան ձեռքով բռնեց գլուխը: Նա կրկին յիշեց քրիստոնեաների մահը: «Իմ թըշուառ աղաւնեակ, քեզ ևս նոյնպիսի մահն է վիճակուած, ի՞նչ ևս արել դու, ինչո՞ւ համար է այդ»: Փաբիոլան ծունկ շոքեց և սկսեց դառնապէս լալ: «Տէր Աստուած, ինչո՞ւ համար է այդ. նա ի՞նչ է արել», մրմնջում էր նա լալով: Եւ երբ նա հարցնում էր «Ինչո՞ւ համար», նա թեթեւութիւն էր զգում, նա հանգստանում էր՝ մինչև անգամ կարծես հասկանում էր՝ «Ինչո՞ւ համար»:— «Թող այնպէս լինի, ինչպէս Քոկամբն է», մտածեց նա և գնաց բանտը Ագնէսայի մօտ:

Երբ նրանք իրար տեսան, գրկախառնուեցին և երկուսն էլ սկսեցին լաց լինել: Փաբիոլան լալիս էր տխրութիւնից, իսկ Ագնէսան ուրախութիւնից, որ տեսաւ Փաբիոլային:

— Իմ աղաւնեակ, հարցնում էր Փարիօլան, պատմիր, ինչպէս պատահեցաւ, որ քեզ բռնեցին. ինչպէս իմացան, որ դու քրիստոնեայ ես: Ազնէսան ժպտաց.

— Մի՛թէ չի երևում՝ ո՞վ է քրիստոնեան և ո՞վ ոչ: Այդ չես կարող ծածկել մարդկանցից և թագցնելու էլ հարկ չըկայ: Մենք նրա համար ենք ապրում, որ գործով ցոյց տանք, թէ ինչպէս պէտք է ապրել: Բայց գործերը չի կարելի ծածկել, նրանք միշտ յայտնի են:

— Ո՞վ է լրտեսել և յայտնել քո մասին:

— Փոյլբիոսը:

— Գնորձեալ Փոյլբիոսը, դոչեց Փարիօլան: Եւ դու դեռ կարողանում ես նրա մասին խաղաղ սրտով խօսել: Ա՛խ, Ազնէսա, ո՞րտեղից է ձեզ մօտ այդքան ոյժը, որ կարողանում էք ձեզ կործանող մարդկանց ևս սիրել:

— Այդ ոյժն ինքն իրեն է գալիս. երբ կը հասկանաս մեր հաւատը և հաւատացեալ կը դառնաս, կըտեսնես, որ այդ երջանկութիւնը միակ հաւատի մէջն է: Իսկ մեր հաւատը թոյլ չէ տալիս ատել մարդկանց, այլ միայն սիրել: Եւ մի՛թէ լաւ է ատելը: Ինքդ մտածիր, արդեօք դու քեզ երջանիկ ես զգում, երբ զայրանում ես:

— Լաւ, այդպէս է. բայց և այնպէս ինչպէս կարելի է սիրել շարագործներին:

— Ես սիրում եմ մարդու մէջ ո՛չ շարագործին և ո՛չ էլ նրա շար գործերը, այլ միայն Աստուծոյ հոգին, և ես ցաւում եմ այնպիսի մարդկանց, որոնք բողոքաւորութիւն չըզիտեն:

— Էլ նրա մէջ ո՞րտեղից է մնում աստուածային հոգի, երբ նա շարութիւն է գործում:

— չէնց ցաւալին էլ այդ է, որ նա մոռանալով Աստուծոյ կամբը՝ ծառայում է շարին, բայց շարութիւնը մարդկանց մէջ յաղթող չի հանդիսանում, որովհետև մենք Աստուծոյ որդին ենք, և ո՛չ շարութեան. միշտ մի ժամանակ կը գայ, երբ մարդս կըյիշի Աստուծուն և այն ժամանակ նա կըյաղթէ իր միջի շարութեանը, և աստուածային հոգին նրա մէջ աւելի կըբարձրանայ. և այդ մենք կոչում ենք ապաշխարութիւն:

— Լաւ, Ազնէսա, բայց ինչպէս պէտք է ապաշխարել:

— Պէտք է հոգւով հասկանաս որ արածդ վատ է:

— Ահաւասիկ ես հասկացել եմ, որ վատ եմ ապրել, բայց թէ ինչպէս պէտք է ապրեմ, այդ չըզիտեմ: Գիտեմ միայն, որ իմ անցկացրած կեանքն այժմ զգուելի է ինձ: Բայց ձեզ պէս ապրելու, կարծում եմ, ոյժերս չեն բաւի:

— Այդպէս ապրելու ոյժը բոլորում է դէպի մարդիկ ունեցած սիրուց և գութից: Աստուած

մարդուն այնպէս է ստեղծել, քր նա խսկապէս
 երջանիկ է զգում միայն այն ժամանակ, երբ
 նա սիրում ու զթում է մարդկանց: Եթէ նա
 կատարում է միայն իւր կրքերը, ցանկութիւն-
 ները, այն ժամանակ նրա երջանկութիւնը մի-
 այն ժամանակաւոր է, այնուհետև դալիս են
 շարժարանքներն ու խղճի կշտամբանքը: Խիղճը
 չի կարելի խաբել, վաղ թէ ուշ՝ նա կը զարթնէ
 մարդու մէջ, այն ժամանակ էլ ոչ մի երկիւղ
 և դժուարութիւն չեն կարող զսպել նրան: Հէնց
 քեզ նայիր, Փարիօլա, և յիշիր, թէ դու երբ
 ես երջանիկ եղել, և կըտեսնես, որ միայն այն
 ժամանակ, երբ դու ապրել ես ուրիշների հա-
 մար: Քրիստոսը այդ մասին ասել է. «Եկաք,
 իմ հօր օրհնուածներ, և ժառանգեցէք իմ ար-
 քայութիւնը, որովհետև սիրել և զթացել էք
 ինձ: Երբ ես քաղցած էի, դուք կերակրեցիք
 ինձ, օտար էի ես, դուք ընդունեցիք ինձ, բան-
 տումն էի, ինձ այցելութեան եկար, որովհե-
 տև ինչ որ դուք արել էք իմ փոքրիկ եղբայր-
 ների համար, այդ ինձ էք արել: Ահաւասիկ
 եթէ դու այդպէս կանես, և պատահի, որ դու
 մարդկանց համար կամ մտածելով և կամ բա-
 րիք գործելով՝ մոռանաս ինքդ քեզ, այն ժա-
 մանակ բազմաւոր կըլինիս այն օրը և հեռի
 չես լինիլ երկնքի և Քրիստոսի արքայութիւ-
 նից: Ուրիշների համար ապրելը դժուար չէ»

միայն պէտք է որքան կարելի է, քիչ ստանաս
 մարդկանցից և շատ տաս նրանց: Երբ դու
 ցանկանաս մի որ և է աւելորդ բան երկրիս
 վրայ, յիշիր՝ թէ Քրիստոս ինչ պատասխանեց
 սատանային անապատում, երբ վերջինս առա-
 ջարկում էր նրան երկնային ամեն թագաւո-
 րութիւնները: Նա ասաց, «ոչ միայն հացով
 կապրէ մարդս, այլ և Աստուծոյ արդարութեամբ»,
 ուստի և ծառայել ու երկրպագել պէտք է ոչ
 մարմնի ձայնին, այլ միակ Աստծուն:

— Լաւ, Ագնէսա, ես կը կատարեմ քո բոլոր
 ասածները և հէնց այժմ իսկ թուում է ինձ, որ
 լաւ կըլինի:

— Թող օգնէ քեզ Քրիստոս: Իմացիր, որ
 նրա հետ դու երբէք չես կորչիլ:

Փարիօլան հարցրեց.

— Երբ պէտք է քեզ դատեն:

— Վաղը:

— Ի՞նչպէս, այդպէս շուտ:

— Ի՞նչ ես այդպէս վախենում. այդտեղ ինչ
 վախենալու բան կայ:

— 2^է որ այդ մահ է:

— Բայց ինչ է մահը: Մահ—այն է, որ
 հոգին գնում է այնտեղ, որտեղից եկել է. բայց
 թէ որտեղ, մինք չենք տեսնում, որովհետև հո-
 գին կարելի է միայն ճանաչել, հասկանալ և
 ապրել նրանով: Ահաւասիկ այդ մենք անուա-

նում ենք մահ: Մահը միայն մարմնի համար է, հողին մահ չունի: Հողին կեանք է: Միթէ զարհուրելի է մահ ճաշակելը: Չէ որ կեանքը մի փառք է, որ գալիս է նրանից, Ո՞վ ամեն բանի սկզբնապատճառն է, Ո՞վ յաւիտեանական է: Ըստ որում մենք կենդանի ենք Աստուծով, որ կեանքի սկիզբն է: Ո՞վ այնպէս մեծ է, Որին չի կարելի երբէք ըմբռնել: Մենք կենդանի ենք նրանով, Որի համար մահ չկայ, նշանակում է՝ որ մեզ համար էլ մահ չկայ: Մահը միայն մարմնի համար է: Մարմինը ոչինչ է, հողին՝ ամեն ինչ է:

Փաբիօլան լուռ լալիս էր: Նա նայում էր Ազնէսայի պայծառ դէմքին, նրա արտասուքներից փայլող աչքերին, և իւր հողին էլ սկսեց աւելի պայծառանալ, աւելի ուրախանալ: Նա ծռնկ չորեց Ազնէսայի առաջ և համբուրում էր նրա ձեռքերը:

— Ազնէսա, դու սուրբ ես, դու երբէք չես մեռնիլ ինձ համար: Քո հողին միշտ ինձ հետ կըլինի: Դու ինձ յայտնեցիր Քրիստոսի լոյսը:

XI

Հետևեալ օրը դատաւորը հրապարակի մէջտեղ նստել էր աթոռի վրայ: Զուրջը խռնուկ էր ամբոխը: Դատաւորին ամենից մօտ կանգ-

նած էր մի կին, որ հագնուած էր շատ պարզ: Դա Փաբիօլան էր:

Ազնէսային բերին հրապարակ, նոյն խաղաղ ու պայծառ դէմքը, ինչպէս էր նախնիթաց օրը, երբ Փաբիօլան նրա մօտ էր:

— Ինչո՞ւ համար սա շղթայուած չէ, հարցրեց դատաւորը:

— Նա այնպէս էլ հանգիստ ու հնազանդ է, ինչպէս գառնուկը, պատասխանեց զինուորների գլխաւորը:

— Ըստ օրինի հարկաւոր է, շղթայեցէք:

Դահիճը վերցրեց ամենափոքրիկ օղակները և հապցրեց Ազնէսայի ձեռքերին: Նա 'տխուր ժպտաց և ձեռքերը ցած թողեց: Նրա ձեռքերն այնքան փոքր էին որ շղթաներն ընկան նրա ոտների տակ:

— Սրանցից փոքրիկ շղթաներ չըկան, մըթմըրթաց դահիճը: Կամ ի՞նչ շղթաներ, բանի որ նա դեռ բոլորովին մանուկ է:

— Լռի՛ր, գոռաց նրա վրայ դատաւորը, և դառնալով դէպի Ազնէսան՝ ասաց.

— Ազնէսա, դու դեռ այնքան երիտասարդ ես, որ մենք խղճալով կամենում ենք քեզ ազատել: Դու մանկութիւնից մեծացել ես քրիստոնեաների մէջ և դու մեղաւոր չես, որ քրիստոնեայ ես դարձել: Հրաժարուի՛ր այժմ այդ կեղծ, վնասակար քրիստոնէական վարդապետութիւ-

նից, ընդունիր մեր հաւատը և երկրպագիր հռովմի աստուածներին: Մի շտապիր պատասխանել. առաջ մտածիր:

Ազնէսային մի բաժակ գինի մատուցին:

Չինուորներից մինը խղճալով Ազնէսային՝ ասաց նրան.

— Գինի թափիր մեր Իւպիտեր աստուծոյ առաջ. միայն թափիր... նրանք կըկարծեն, թէ դու արդէն հրաժարուեցիր և կարձակեն քեզ: Ինքզ ամոթիր, ինչ որ կամենում ես քեզ համար, քեզ ոչ որ չի խանգարում, միայն գինին թափիր:

Ազնէսան կարմրեց և նրա աչքերում արտասուքներ երևացին: Գատաւորն սպասում էր պատասխանի, իսկ զինուորը պահում էր գինու բաժակը, և համարեա զօրով դրաւ Ազնէսայի ձեռքին: Արժէր միայն վերցնել բաժակը, և նա ազատուած կըլինէր: Ազնէսան ուշադրութեամբ նայում էր բաժակին. նա հանդարտութեամբ մեկնեց ձեռքերը, և... հեռացրեց բաժակն իրենից:

Ազնէսայի դէմքն սկսեց աւելի սլայծառանալ, և աչքերն սկսեցին փայլել:

— Զեմ կարող ոչ ինձ խաբել և ոչ էլ այստեղ եզրոյներին: Չեր աստուածներն աստուածներ չեն, այլ կուռքեր: Միայն մի Աստուած կայ մեզ ամենքից վերև, և նրա ձեռքին է մեր կեանքն էլ, մահն էլ:

— Պատժեցէք դրան հէնց իսկոյն և եթ, գոչեց դատաւորը:

— Ազնէսան ձեռքերը երկինք բարձրացնելով ծունկ խոնարհեց: Իւր փորրիկ ձեռնիկներով բռնեց իւր խիտ մազերի հիւսերը և երկու մասի բաժանելով՝ կախկախեց իւր կուրծքի վրայ, և ապա վերջին անգամ նայեց դէպի երկինք:

Արեգակն ամպերի տակից դուրս նայեց և Ազնէսայի մազերն արեգակի տակ սկսեցին փայլել ոսկու պէս:

Նրա չուրջը տիրեց լոյս և ուրախութիւն: Ազնէսան ժպտաց արեգակին և խոնարհութեամբ կախեց գլուխը: Նա դահիճների առաջ ծունկ չորած՝ սպիտակ շոր հագած և ձեռքերը կուրծքի վրայ խաչած՝ հեղ ու խոնարհ սպասում էր իւր մահուան:

Լուռ էին ամենքը. ոչ որ տեղից չէր շարժւում: Նոյն իսկ դահիճը չըկարողացաւ դանակը միանգամից բարձրացնել նրա վրայ: Եւ վերջապէս՝ շուտ վերջ տալու համար՝ նա ձեռքը վրայ բերեց, սուրը շողաց նրա գլխին և... Ազնէսան արդէն մեռած ընկաւ գետին: Նրա սպիտակ հագուստը ծածկուեցաւ արեան շիրտերով:

Ամբոխը հառաչեց և սոսկաց, սոսկաց և Փաբիօլան:

Տժգոյն որպէս մեռեալ, նա մօտեցաւ Ազ-

նէսայի մարմնին և իրենից վերցնելով թաշկի-
նակը՝ սպանուածի դիակը ծածկեց:

Ամբոխը հաւանեց Փաբիօլայի վարմունքը
և ծափահարեց նրան:

— Դատաւոր, ասաց Փաբիօլան, խնդրեմ
ինձ շնորհէք այս դժբաղդին: Ես աշխարհումս
ամեն բանից աւելի նրան էի սիրում և կամե-
նում եմ ինքս թաղել նրան:

— Դո՛ւ ևս քրիստոնեայ ես:

— Ո՛չ, ես դեռ արժանի չեմ քրիստոնեայ
անուանուելու, որովհետև ես դեռ այնքան ոյժ
չունիմ, որ կարողանամ խոնարհութեամբ կրել
այն տանջանքները որոնք կրում են բոլոր քրիս-
տոնեաները: Բայց այն, ինչ որ ես հէնց այժմ
տեսայ, այսինքն՝ այս համարեա մանուկի մահը
ամեն տեսակ մարդու էլ կըհարկադրէ քրիստոն-
եաների կողմն անցնել:

Դատաւորը դէմքը լսոժողեց:

— Ասելդ ինչ է, հարցրեց նա:

Փաբիօլան պատասխանեց.

— Ես ասում եմ, որ այն հաւատը, որը
հրամայում է մարդկանց գործել բարութիւն,
սիրել իւր տանջողներին և այսպէս խոնարհու-
թեամբ մեռնել, որպէս մեռաւ այս աղջիկը,

— գերազանց է ձեր հաւատից:

Ապա դառնալով դէպի ժողովուրդն, ասաց.

— Ասացէ՛ք, ձեր կարծիքով ո՞ր հաւատն է

աւելի լաւ. այն հաւատը, որ հրամայում է սպա-
նոտել լաւ մարդկանց, թէ՛ Քրիստոսի հաւատը,
որ հաճելի է ամեն մարդու սրտին և որի ձայ-
նը իւրաքանչիւր մարդ լսում է իւր սրտի մէջ:

Ամբոխը լուռ էր:

— Անունդ ինչ է, հարցրեց դատաւորը:

— Փաբիօլա:

Դատաւորը բաղցր դէմք ընդունելով՝ ասաց.

— Ես շատ եմ լսել քո մասին և քո բարե-
գործութիւնների մասին: Դու այս թշուառի
ազգականուհին ես, ուստի և քեզ իրաւունք եմ
տալիս տանել նրա մարմինը:

XII

Փոյլբիոսի բոլոր հաշիւները՝ Ագնէսայի
հարստութիւնը ձեռք ձգելու համար՝ ի դերև
անցան: Նա կամենում էր գնալ բանտը, խնդ-
րել Ագնէսայի ձեռքը, որպէս զի իւր հետ ա-
մուսնանալով՝ միասին փախչեն Հռովմից, բայց
Ագնէսայի բարեկամները թոյլ չըտուին նրան
գնալ նրա մօտ: Ապա՝ Ագնէսայի մահուանից
յետոյ՝ հռովմայեցոց կայսրից խնդրեց, որ հրա-
մայէ Ագնէսայի հարստութիւնն իրեն տալ, բայց
այդ ևս չըյաջողեցաւ: Փոյլբիոսին ատողները
կարողացել էին արդէն հասկացնել կայսրին,
թէ Փոյլբիոսը շի կարողացել իւր գործն այն-

պէս տանել, ինչպէս որ պահանջուած էր, այն է՝ քրիստոնեաներին գաղտնի կերպով պէտք էր ձերբակալել և ոչ յայտնապէս յաշս ժողովրդեան, և թէ արդէն Ազնէսայի մահուան պատճառով մեծ խօսակցութիւն է ընկել ամբողջ քաղաքում, սկսել են խօսել իրենց հաւատի մասին, յայտնելով որ այդ լաւ հաւատ չէ, եթէ նրա համար պէտք է մարդիկ սպանոտել: Կայսրը վախեցաւ և հրամայեց առ ժամանակ դադարեցնել քրիստոնեաների հալածանքը, մինչև որ քաղաքում այդ խօսակցութիւնները կը դադարեն: Իսկ երբ Փոյլբիոսը եկաւ կայսրի մօտ, վերջինս սաստիկ բարկանալով նրա վրայ՝ ասաց, թէ նա ոչ թէ միայն անարժան է որ և է վարձատրութեան, այլ պէտք է նրան ևս սպանել, ուստի և ոչինչ չըտալով արտաքսեց նրան:

Ըստ օրինի՝ Ազնէսայի հարստութիւնն անցաւ Փարիօլային: Փոյլբիոսը երբ իմացաւ այդ սաստիկ բարկացաւ, և նրա ամբողջ շարութիւնը բորբոքուեց Փարիօլայի դէմ: Ուստի և որոշեց գնալ Փարիօլայի մօտ, պահանջել նրանից փողերը, և կամ սպանել նրան և բոլորովին հեռանալ Հռովմից:

Ազնէսայի մահուանից յետոյ՝ Փարիօլան իսպառ թողեց իւր ճոխ կեանքը. նա Ազնէսայի ցանկութեան համաձայն՝ Սիրայի հետ տեղափոխուել էր Ազնէսայի բնակարանը և Սիրա-

յի հետ անում էր այն ամենը, ինչ որ արել էր Ազնէսան: Ամբողջ օրերով նրանք զբաղուած էին: Նրանց մօտ գալիս էին զանազան կարգի մարդիկ, մեծ մասամբ աղքատներ, կամ խորհուրդ և կամ օգնութիւն խնդրելու. գալիս էին և քաղցածներն ու պատառոտուն հագուստ ունեցողները: Նրանք էլ կերակրում էին այդպիսիներին, օգնում էին նրանց թէ խօսքով և թէ գործով: Գնում էին բանտերը, և այնտեղ էլ անում էին այն, ինչ որ կարող էին և կամ կարող էր: Նրանց երկուսին էլ ամեն ուրեք սիրում էին, և յաճախ հէնց իրենք աղքատները գալիս էին նրանց մօտ և օգնում էին նրանց՝ աղքատներին վերաբերեալ գործերում:

Փոյլբիոսը վերջապէս գտաւ այն տունը, որտեղ ապրում էր Փարիօլան, և բարձրացաւ նրա մօտ: Փոյլբիոսն առաջին անգամից շրճանաչեց նրան: Փարիօլան ամենահասարակ հագուստ ունէր հագած, որպիսին հագնում էին միայն սարկուհիները: Փարիօլայի առաջ դրուած էին զամբիւլներ, որոնց մէջ նա դարստտում էր հաց, կաթ ու ձու: Աղքատների որդիքն էլ սնեկակում նրա մօտն էին. նրանցից ոմանք խաղում էին, ոմանք էլ օգնում էին Փարիօլային իրերը դարստտելիս:

— Երբ Փոյլբիոսը ներս մտաւ, Փարիօլան գլուխը բարձրացրեց դէպի նա և սարսափեց:

Առաջին բուպէից Փաբիօլայի աշքերը փայլեցին կատաղութեամբ, ապա դալկացաւ, տխրեց և աշքերն արտասուեակալեցին: Եւ նա ասաց.

— Ինչո՞ւ եկար ինձ վրդովելու: Հեռացիր ինձանից. ինձ համար ծանր է քեզ նայելը: Քո ներկայութիւնը զարհուրելի է. նա ինձ յիշեցընում է իմ սիրելիներէից շատերի մահը:

Փոյլբիոսը պատասխանեց.

— Ինձ համար էլ ծանր է. ես քեզ մօտ գործով եմ եկել: Ասո՛ւ, Փաբիօլա, քո ինչին է պէտք այժմ փողը: Ինչպէս տեսնում եմ, դու բոլորովին աղքատ ես ապրում, տո՛ւր ինձ Ագնէսայի փողերը, նրանք քեզ չեն պատկանում, այլ ինձ: Գու առանց աշխատանքի ես ձեռք բերել այդ, իսկ ես դրա համար չարչարուել եմ, ստել եմ, խաբել եմ, մարդիկ եմ սպանել և վերջապէս կորցրել եմ խիղճս: Տո՛ւր ինձ փողերը, նրանք իմն են. ինձ կը վայելէ ստանալ նրանց:

— Քե՞զ կը վայելէ... թշուա՛ռ: Բայց իրա՛ւ ես ինչպէս տեսնում եմ, դու կորցրել ես խիղճդ: Այդ դեռ բաւական չէ, որ Ագնէսային սպանել ես, դեռ դրա համար վարձատրութիւն էլ ես պահանջում: Բայց յիշիր՝ խիղճը բոլորովին չի կորչում, կը գայ ժամանակ, որ դու կը լսես խղճիդ ձայնը և կը սարսափես քո գործերի համար:

Փոյլբիոսը դողողաց:

— Լու՛իր, Փաբիօլա, այդ քո բանը չէ: Ագնէսայի ուրուականը հէնց այժմ էլ հալածում է ինձ. յիշում եմ նրա սպիտակ հագուստը, յիշում եմ՝ թէ ինչպէս նա ծունկ չորած, գլուխը խոնարհած, սպասում էր իւր պատժին: Այդ մասին ոչինչ մի խօսիր. ես չեմ կամենում այդ մասին մտածել: Տո՛ւր ինձ միայն նրա փողերը, և ես կը հեռանամ հեռու տեղ. տո՛ւր, ասում եմ, թէ չէ՛ կը սպանեմ քեզ:

— Զե՛մ կարող ես փողերը քեզ տալ: Եթէ քեզ տամ, ես զրկած կըլինիմ աղքատներին: Մտածիր՝ թէ ո՞ւմ փողերն են դրանք: Նրանք, ով ամբողջ կեանքով աշխատել է մեզ համար, թէ նրանք, ով ոչինչ նեղութիւն չի քաշել, բացի շարութիւնից: Այդ փողերն իմս չեն, և ես ինձ վրայ չեմ ծախսում: Ես ծախսում եմ այն մարդկանց վրայ, որոնց համար խնդրել է ինքը Ագնէսան: Զե՛մ կարող ես փողերը քեզ տալ. դու շարութեան համար ես խնդրում նրանց: Քեզ պէս մարդուն փող չի կարելի տալ: Աւելի լաւ է հեռանաս ինձանից. մենք միմեանց հետ խօսելու ոչինչ չունենք. մենք միմեանց չենք հասկանալ:

— Ո՛չ, ես չեմ հեռանալ, մինչև փողերն ինձ չըտաս:

— Ինչպէս կամիս, այդ քո գործն է. ու-

դում ես նստիր այդտեղ: Միայն այժմ ես քեզ մօտ նստել չեմ կարող: Մնան բարեաւ: Եւ Փարբիօլան դուրս գնաց միւս սենեակը:

Փոյլբիոսը հասաւ նրան և գոռաց.

— Տնւր փողերը, թէ չէ՝ կըսպանեմ քեզ:

— Աւելի լաւ է սպանեմ, բայց փողերը չեմ տալ: Ես գիտեմ, որ եթէ դու փող ոճնենաս, աւելի կըփշանաս. քեզ հարկաւոր չէ փող:

— Ուրեմն, ահա՛ քեզ...

Եւ Փոյլբիոսը դանակը ձեռքին՝ յարձակւեցաւ Փարբիօլայի վրայ:

Այդ իսկ րոպէին ներս վազեց Սիրան, ընկաւ Փոյլբիոսի ոտները և նրա ճանապարհը կտրեց:

— Խելքդ գլուխդ հաւարիր, Փոյլբիոս, այդ ինչ ես անում, գոչեց Սիրան:

Փոյլբիոսը դառնալով դէպի Սիրան, և շարութիւնից կուրացած՝ դանակը խրեց ուղղակի նրա կուրծքը: Սիրան արիւնաթաթաւ ընկաւ առակի վրայ:

Փոյլբիոսն ուշքի եկաւ: Յանկարծ նրա երեսը ծամածուռեց սարսափից և նա ամբողջ մարմնով սկսեց դողդողալ, և գլուխը ձեռների մէջ առնելով՝ ասաց.

— Այս ինչ արի ես: Ռհ, աստուածներ, ես այս ինչ արի: Եւ դուրս վազեց սենեակից: Փարբիօլան վազեց դէպի Սիրան: Սիրան

արդէն մեռած էր: Փարբիօլան վեր կացաւ: Նա լաց չէր լինում, այլ այդ միևնոյն տեղը կանգնելով՝ նայում էր Սիրայի անշնչացած երեսին: Փարբիօլան անզգայացել, կարծես բարացել էր:

— Ներիւր, քոյրիկ, մնան բարեաւ, Սիրա: Դու ինձ համար շատ ես շարշարուել, շնորհակալ եմ քեզանից: Դու թէ լաւ ես ապրել և թէ մեռար նախանձելի մահով: Քրիստոս ասել է, որ չըկայ աւելի լաւ բան, քան իւր անձը ընկերի համար դնելը: Դու այդպէս էլ արիր: Տէր ընդ քեզ: Երևի այդ եւ Աստուծոյ կամքն է: Դու այլ ես չկաս ինձ հետ, բայց ես շատ քոյրեր և եղբայրներ ունիմ և ես, պէտք է ապրեմ նրանց համար: Այդ ևս Աստուծոյ կամքն է:

Ներս մտան Փարբիօլայի բարեկամները — աղբատները — և Սիրային մեռած տեսնելով՝ զարմացան և սկսեցին լաց լինել և հարց ու փորձ անել Փարբիօլային, թէ ինչպէս է պատահել. ապա Սիրային վերցնելով՝ ուրիշ սենեակ տարին: Ծանր հառաչեց Փարբիօլան, ապա դամբիւղները վերցնելով՝ գնաց բանտը նեղեալների և քաղցածների մօտ, գիտենալով, որ նրանք սպասում են իրեն, սպասում են միջոցառութեան և նրա բարի խօսքին:



Henry

1925

Henry

[Faint, mostly illegible text, possibly bleed-through from the reverse side of the page]

*Boerans
Boerans
Boerans
Boerans
Boerans
Boerans
Boerans*

RO 13

